

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**

**ՈՒ Ղ Ե Ց ՈՒ Յ Ց**

**ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎԱԿԱՆ ՁԵՎԵՐՈՒՄ  
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՇՄԱՆ**

**Երևան  
Հունվար 2012**

*Մեթոդական ուղեցույցի համահեղինակ՝*

*ՀՀ էկոնոմիկայի նախարարություն*

*ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե*

**Հարգելի հարկ վճարող,**

2012 թվականից սկսած հարկ վճարողները նշելու են իրենց տնտեսական գործունեության տեսակի (ըստ ՏԳՏՀ) վերաբերյալ տեղեկատվությունը ներքոնշյալ տարեկան հաշվետվությունների ձևերում՝

ա. Շահութահարկի հաշվարկում կամ շահութահարկի պարզեցված հաշվարկում՝ ռեզիդենտ կազմակերպությունների համար,

բ. Տարեկան եկամուտների մասին հաշվարկում՝ ոչ ռեզիդենտ կազմակերպությունների համար,

գ. Պարտադիր սոցիալական ապահովության վճարի տարեկան եկամուտների մասին հայտարարագրում՝ անհատ ձեռնարկատերերի և նույնի համար.

Վերը թվարկած հաշվետվական ձևերում ավելացել է հետևյալ աղյուսակը՝

**Աղյուսակ. Եկամուտները՝ ըստ գործունեության տեսակների**

Գործունեության տեսակը (կոդը)				Տեսակարար կշիռը (%)
բաժին	հատված	խումբ	դաս	

Աղյուսակում նշվում են հաշվետու տարում հարկ վճարողի ըստ գործունեության տեսակների ստացված եկամուտների տեսակարար կշիռները (տոկոսով) համախառն եկամտի մեջ (ըստ կշիռների նվազման): Օրինակ՝ C2591 կոդը /բաժին C, հատված 25, խումբ 25.9, դաս 25.91/ համապատասխանում է «Մերտաղական տակառների և համանման այլ տարողությունների արտադրություն» գործունեության տեսակին», իսկ «Տեսակարար կշիռը (%)» սյունակում համամասնությունները նշվում են տոկոսով համախառն եկամտի նկատմամբ: Նշված տեղեկություններն օգտագործվում են վիճակագրության նպատակով և հիմք չեն հանդիսանում շահութահարկի (սոցիալական վճարների) հաշվարկման (վերահաշվարկման) համար:

1. «Բաժին» սյունակում լինելու են միայն լաբորանտական տրանզիտ, առավելագույնը մեկ տրանզիտ:

2. «Հատված» կազմված է 2 սյունակից, յուրաքանչյուրում լրացվելու է մեկ թիվ մեկ նիշով:

3. «Խումբ» սյունակում լրացվելու է թիվ, բաղկացած 1 նիշից:

4. «Դաս» սյունակում լրացվելու է թիվ, բաղկացած 1 նիշից:

5. «Տեսակարար կշիռը» սյունակում կարող է լինել 3 նիշ: Ստորակետ պետք չէ դնել: (Օրինակ՝ 1 կամ 21 կամ 100):

Մեր կողմից բերված օրինակի դեպքում աղյուսակը պետք է լրացնել հետևյալ կերպ՝

Գործունեության տեսակը (կոդը)				Տեսակարար կշիռը (%)
բաժին	հատված	խումբ	դաս	
<b>C</b>	<b>2</b>	<b>5</b>	<b>9</b>	<b>100</b>

Նշված փոփոխությունները սահմանվել են ներքոթվարկյալ հրամաններով՝

1. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 06.05.2011թ. «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2005թ. մայիսի 30-ի N 1-05/05-Ն հրամանում լրացում կատարելու մասին» N°762-Ն հրամանը (հրապարակվել է ՀՀ ԳՆԱՏ 01.07.2011թ N16/399):

2. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 05.09.2011թ «ՀՀ ԿԱ հարկային պետական ծառայության 02.04.2004թ. «Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին» հրահանգը հաստատելու և ՀՀ հարկային տեսչության 05.02.1998թ. N°01/10 ու 11.02.1999թ. N°01/8 հրամանները ուժը կորցրած ճանաչելու մասին» N°1-05/7-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» N°2060-Ն հրամանը (հրապարակվել է ՀՀ ԳՆԱՏ 01.11.2011թ N25/408):

3. ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 05.09.2011թ. «ՀՀ հարկային տեսչության 04.03.1999թ. «Ոչ ռեզիդենտների շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին հրահանգը հաստատելու մասին» N°01/13 հրամանում լրացումներ կատարելու մասին» N°2061-Ն հրամանը (հրապարակվել է ՀՀ ԳՆԱՏ 01.11.2011թ N25/408):

## 1. Ընդհանուր տեղեկություններ

Հայաստանի Հանրապետության տնտեսությունում շուկայական հարաբերությունների արմատավորումը, փարբեր երկրների տնտեսական համակարգերի ինտեգրացումը պահանջում են տնտեսության վիճակի և զարգացման գործընթացների վերաբերյալ միասնական տեղեկատվական դաշտի ձևավորում, տնտեսական նույնական համակարգի վարում:

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը (ՏԳՏԴ Խմբ.2), որպես ստանդարտ հաստատվել է ՀՀ Էկոնոմիկայի նախարարի 03.06.2009 թվականի N372-Ն հրամանով և գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 01.07.2009 թվականին (Պետական գրանցման թիվ 10309238):

Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչը նախատեսված է իրավաբանական և ֆիզիկական անձանց գործունեությունը բնութագրող անհրաժեշտ տվյալների (արտադրանքի թողարկման, աշխատուժի, նյութական ռեսուրսների, տնտեսավարող սուբյեկտների միջև իրականացվող այլ գործառնությունների) հաշվառման և մշակման, ըստ գործունեության տեսակի դասակարգման և ծածկագրման համար:

Տնտեսական գործունեությունն առկա է, երբ ռեսուրսները՝ սարքավորումները, աշխատուժը, տեխնոլոգիաները, հումքը, նյութերը, տեղեկատվական ցանցերը միավորված են ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով:

Տնտեսական գործունեությունն իրականացվում է կամ մեկ պարզ գործընթացով, կամ բաղկացած է մի շարք գործընթացներից, որոնցից յուրաքանչյուրը կարող է դիտվել որպես ինքնուրույն գործունեություն և դասակարգվել առանձին դասում: Վերջին դեպքում արտադրական միավորը իրականացնում է խառը տնտեսական գործունեություն:

**Տնտեսական միավորի գործունեությունը դասակարգվում է ըստ տնտեսական գործունեության հիմնական տեսակի:** Հերևաբար անհրաժեշտ է փարբերակել տնտեսական միավորի հիմնական, երկրորդային և օժանդակ գործունեությունը:

**Հիմնական տնտեսական գործունեություն** է համարվում տնտեսական միավորի գործունեության այն տեսակը, որը համախառն ավելացված արժեքի ընդհանուր ծավալում կազմում է առավել մեծ տեսակարար կշիռ: Շատ դեպքերում հիմնական գործունեության տեսակը նպատակահարմար է որոշել համախառն արտադրանքի ծավալի, զուտ հասույթի, աշխատողների ընդհանուր թվաքանակի կամ այլ ցուցանիշների տեսակարար կշռով:

**Երկրորդային տնտեսական գործունեություն** է համարվում տնտեսական միավորի գործունեության յուրաքանչյուր այլ տեսակը, բացի հիմնական տնտեսական գործունեությունից, որն ուղղված է իրացվող ապրանքների արտադրությանը կամ ծառայությունների մատուցմանը:

**Օժանդակ գործունեությունը** սովորաբար ապահովում է տնտեսական միավորի հիմնական և երկրորդային գործունեությունը, երբ օժանդակ գործունեության արդյունքում արտադրված ապրանքները կամ մատուցված ծառայությունները նախատեսված են այդ միավորի սեփական օգտագործման համար: Օժանդակ գործունեության տեսակ են հանդիսանում վարչարարությունը, հաշվապահական հաշվառումը, արտադրանքի փոխադրումը, պահումը, գնումները, իրացումը, նորոգումն ու տեխնիկական սպասարկումը և այլն:

Օժանդակ գործունեության տեսակ չեն համարվում՝

ա) հիմնական կապիտալի կուրակմանը նպաստող ապրանքների արտադրությունը կամ ծառայությունների մատուցումը, օրինակ՝ տնտեսական միավորի հաշվին կատարվող շինարարական աշխատանքները,

բ) հիմնական կամ երկրորդային գործունեության արդյունքում թողարկված ապրանքների բաղկացուցիչ մաս կազմող արտադրանքի արտադրությունը, օրինակ՝ սեփական արտադրանքի փաթեթավորման համար միավորի ստորաբաժանման կողմից արկղերի արտադրությունը,

գ) սեփական սպառման համար տնտեսական միավորի կողմից արտադրվող միջանկյալ արտադրանքը, որի մեծ մասը իրացվում է նաև արտաքին սպառողներին,

դ) հեղափոխությունները և մշակումները, եթե դրանք հիմնական կամ երկրորդային գործունեության ընթացքում չեն կիրառվում:

Տնտեսական միավորների դասակարգման համար գործունեության տեսակները չեն առանձնացվում ըստ կազմակերպական իրավական ձևերի, մասնավոր կամ պետական հատվածների, տարբերություն չի դրվում նաև աշխատանքի բնույթի միջև՝ արտադրությունը մեքենայացված է, թե՛ ձեռքի է, գործարանային է, թե՛ տնայնագործական:

ՏԳՏԴ Խմբ.2-ի Հայաստանի Հանրապետության դասակարգչում սահմանվում են տնտեսական գործունեության տեսակների անվանումները համապատասխան կոդերով:

Տնտեսության հիմնարար ճյուղերը դասակարգչում ներկայացված են բաժիններով, որոնք նշված են A-U լատինական տառերով:

Տնտեսական գործունեության տեսակների կոդի կառուցվածքն է՝ XX.XX.X: Դասակարգչի առաջին երկնիշ (XX) և երկրորդ աստիճաններում (X) գործունեության տեսակները խմբավորված են համապատասխանաբար հատվածներով և խմբերով, հաջորդ աստիճանում (X)՝ դասերով: Դասակարգչի հինգերորդ նիշը (X) ենթադասի մակարդակով նախատեսված է գործունեության տեսակների մանրամասնեցման և տեղայնացման համար: Եթե կոդի ենթադասի աստիճանում նշված է «0», ապա այդ մակարդակում գործունեության տեսակները մանրամասնեցված չեն և չորրորդ ու հինգերորդ նիշի մակարդակով կոդերի անվանումները համընկնում են:

Հայաստանի Հանրապետությունում հարկ վճարողները տարեկան հաշվետվական ձևերում իրենց տնտեսական գործունեության տեսակը նշելու համար օգտագործում են քառանիշ կոդը (դասի մակարդակ):

Աղյուսակում բերվում են ՏԳՏԴ Խմբ.2 դասակարգչի կառուցվածքի վերաբերյալ հետևյալ քանակական տվյալները:

Ստորակարգության մակարդակ	ՏԳՏԴ Խմբ.2	
	Քանակը	Կոդավորումը
Բաժին	21	A-U
Հատված	88	01 - 99
Խումբ	272	01.1 - 99.0
Դաս	615	01.11 - 99.00
Ենթադաս	386	01.11.1 - 99.00.0

Միջազգային ստանդարտներին համաձայն, երկրի տնտեսությունը բաժանվում է արդյունահանող (հումքային), մշակող և ծառայություններ մատուցող ճյուղերի: Արդյունահանող (հումքային) են համարվում կազմակերպությունները, որոնց գործունեությունը դասակարգվում է A և B բաժիններում («Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն», «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»), հումք մշակող կազմակերպությունների գործունեությունը դասակարգվում է C, D և E բաժիններում («Մշակող արդյունաբերություն», «Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում», «Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում»), իսկ ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը՝ G-U բաժիններում: F բաժինը համարվում է սահմանային, քանի որ շինարարական կազմակերպությունները հիմնականում մատուցում են արդյունաբերական բնույթի ծառայություններ:



## **2. Տնտեսական գործունեության կողավորման կարգը**

Տնտեսական գործունեության կողավորումը ճիշտ կազմակերպելու համար անհրաժեշտ է ծանոթանալ դասակարգչի խմբավորումների բովանդակությանը հաջորդական ստորադասությամբ՝ բաժին, հատված, խումբ, դաս, ենթադաս, ինչպես նաև դասակարգչում տեղ գտած հասկացությունների սահմանումներին:

ՏԳՏԴ Խմբ.2 դասակարգիչը հիմնականում կազմված է երկու մասից՝ Դասակարգիչ (Մաս 1), Պարզաբանումներ (Մաս 2):

Դասակարգչի առաջին մասում տրվում են տնտեսական գործունեության տեսակների անվանումները հաջորդական ստորադասությամբ և համապատասխան կոդերը: Երկրորդ մասում բնութագրվում է յուրաքանչյուր խմբավորմանը համապատասխանող տնտեսական գործունեությունը (տեխնոլոգիական գործընթացը, օգտագործվող հումքը, արտադրական ծառայությունները), տրվում են բացառությունները՝ գործունեության այն տեսակները, որոնք բնույթով մոտ են տվյալ խմբավորմանը, սակայն դասակարգվում են այլ դասերում:

Ստորև ներկայացվում են ՏԳՏԴ Խմբ.2 դասակարգչի պարզաբանումները՝ բաժնի և հատվածների մակարդակով:

### **A**

#### **ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ, ԱՆՏԱՌԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՁԿՆՈՐՄՈՒԹՅՈՒՆ**

Բաժինն ընդգրկում է բուսական և կենդանական բնական պաշարների շահագործումը: Բաժինը ներառում է մշակաբույսերի աճեցումը, անասնաբուծությունը, անտառային տնտեսությունը, այլ բույսերի և կենդանիների բուծումը գյուղացիական տնտեսություններում կամ բույսերի հավաքը և կենդանիների որսը բնական միջավայրում:

## 01

### **Բուսաբուծություն ու անասնաբուծություն, որսորդություն և հարակից ծառայություններ**

Հասրվածը ներառում է գյուղատնտեսության բնագավառում գործունեության երկու հիմնական տեսակները՝ բուսաբուծական մթերքի արտադրությունը (բուսաբուծություն) և անասնաբուծական մթերքի արտադրությունը (անասնաբուծություն): Այն ընդգրկում է օրգանական գյուղատնտեսության ձևերը, գենետիկորեն ձևափոխված մշակաբույսերի աճեցումն ու կենդանիների բուծումը, մշակաբույսերի աճեցումը բաց դաշտերում, փակ տարածքներում կամ ջերմոցներում, օժանդակ ծառայությունների մատուցումը գյուղատնտեսության բնագավառում:

Տվյալ հասրվածում ներառվում են նաև որսորդությունը, վայրի կենդանիների որսը բուծման կամ մթերք ստանալու նպատակով և օժանդակ ծառայությունների մատուցումը (օրինակ՝ թակարդների տեղադրումը) այդ բնագավառներում:

Գյուղատնտեսական գործունեությունը բացառում է գյուղատնտեսական արտադրանքի մշակումը: Վերջինս դասակարգվում է 10 և 11 հասրվածներում «Սննդամթերքի արտադրություն», «Խմիչքների արտադրություն» և 12 հասրվածում «Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն»: Այս հասրվածում ներառվում է միայն նախնական մշակումը՝ գյուղմթերքի նախապարաստումը շուկայում իրացման համար:

Բացառվում է՝

- գյուղատնտեսական հողային աշխատանքները՝ հողի սանդղավորում, ցամաքորդ (դրենաժ), գրունտի նախապարաստում և այլն, (տես բաժին F),
- գյուղմթերքի մեծածախ առևտրով զբաղվող միավորումների և կոոպերատիվների գործունեությունը, (տես բաժին G),
- գեղազարդ այգեգործությունը, կանաչ տարածքների խնամքը, (տես 81.30):

## 02

### Անտառային տնտեսություն և փայտամթերումներ

Հատվածը ներառում է անտառահատման, կլոր անտառանյութի սրահման, վայրի աճող անտառանյութերի մթերման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև նախնական մշակման ենթարկված արտադրանքի՝ վառելափայտի, փայտածխի, գերանների, խյուսափայտի և փայտի կտորների արտադրություն: Տվյալ գործունեությունը կարող է իրականացվել ինչպես բնական, այնպես և փնկած անտառներում:

Բացառվում է անտառանյութի լրացուցիչ մշակման հետ կապված գործունեությունը, ներառյալ անտառների պլանավորումը (տես 16 հատվածը):

## 03

### Ձկնորսություն և ձկնաբուծություն

Հատվածը ներառում է օվկիանոսում, բաց ծովում, քաղցրահամ ջրերում ձկնորսությունը և ձկնաբուծությունը, խեցեմորթների, կակղամորթների, անողնաշարավորների որսը, այլ ջրային մարմինների (սպունգների, մարգարտախեցիների, մարջանների, ջրիմուռների) հավաքումը և բուծումը: Այստեղ դասակարգվում է նաև սեփական միջոցներով իրականացվող գործունեությունը, որը սովորաբար ներառվում է այլ մթերքի արտադրության գործընթացում, օրինակ՝ ոստրեների բուծումը մարգարիտ ստանալու համար: 03 հատվածում ներառվում են ձկնորսության և ձկնաբուծության բնագավառներին բնորոշ ծառայությունները, առանց դրանց տարանջատման ըստ նշված բնագավառների:

03 հատվածում բացառվում է ձկնորսանավերի և նավակների նորոգումը (տես 30.1, 33.15), սպորտային կամ սիրողական ձկնորսությունը (տես 93.19), ձկների, խեցեմորթների, կակղամորթների մշակումը առափնյա կամ ձկնորսությամբ չզբաղվող նավերի վրա տեղակայված ձկնագործարաններում (տես 10.20):

## **B**

### **ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ**

Հանքագործական արդյունաբերությունը ներառում է բնության մեջ հանդիպող պինդ ապարների (քարածուխ, գորշ ածուխ, հանքաքար), հեղուկ կամ գազային վիճակում (նավթ, բնական գազ) հանքանյութերի արդյունահանումը: Արդյունահանումը կարող է իրականացվել փարբեր եղանակներով՝ ստորգետնյա կամ բացահանքերում, հորափանցքերից, ծովի հատակից: Այս բաժնում ներառվում է նաև շուկայում իրացման համար հումքի նախնական մշակման օժանդակ գործունեությունը՝ մաքրումը, փեսակավորումը, մանրացումը, սեղմումը, հարստացումը, որպես վառելիք օգտագործելու համար ածխի շեղաքարացումը, բնական գազի հեղուկացումը և այլն: Այս գործունեության փեսակները սովորաբար իրականացնում են արդյունահանմամբ զբաղվող կազմակերպությունները:

Հանքագործական գործունեությունը դասակարգվում է հատվածներում, խմբերում և դասերում ըստ հիմնական հանքանյութերի: 05 և 06 հատվածները ներառում են հանածո վառելիքի՝ քարածխի, գորշ ածխի, նավթի, գազի արդյունահանմանն ուղղված հանքագործական գործունեությունը: 07 և 08 հատվածները ներառում է մետաղական հանքաքարերի, փարբեր օգտակար հանածոների արդյունահանմանն ուղղված հանքագործական գործունեությունը:

Տվյալ բաժնի որոշ փոխնիկական աշխատանքները (հատկապես կապված ածխաջրածնի արտազատման հետ), որոնք սովորաբար իրականացվում են առանձին մասնագիտացված կազմակերպությունների կողմից, որպես արդյունաբերական ծառայություններ դասակարգվում են 09 հատվածում:

Բացառվում է՝

- նյութերի ստացման հետ կապված մշակման գործունեությունը (փես բաժին C «Մշակող արդյունաբերություն»),

- հանքանյութերի արդյունահանմանը զուգորդող շինարարական աշխատանքները (փես բաժին F «Շինարարություն»),

- բնական աղբյուրներից և ջրհորներից ստացված աղբյուրի և հանքային ջրերի շշալցումը (տես 11.07),

- ապարների, հանքանյութերի մանրացումը, տեսակավորումը, մաքրումը և այլ մշակումը, որը չի զուգորդվում հանքագործական կամ արդյունահանման գործունեության հետ (տես 23.9):

### **05 Քարածխի և գորշ ածխի (լիգնիտի) արդյունահանում**

### **06 Անմշակ նավթի և բնական գազի արդյունահանում**

### **07 Մետաղական հանքաքարի արդյունահանում**

Հատվածը ներառում է ստորգետնյա եղանակով կամ բացահանքերում բաց եղանակով մետաղական հանքաքարի արդյունահանումը: Ներառվում են նաև հանքաքարի մաքրման և հարստացման հետ կապված գործողությունները՝ մանրացումը, աղումը, լվացումը, մագնիսական կամ գրավիտացիոն զտումը, հանքահարստացումը (ֆլուտացումը), չորացումը, շիկացումով ջրազտումը, թրծումը:

Բացառվում է՝

- երկաթաքարի թրծումը (տես 20.13)
- այլումինի օքսիդի արտադրությունը (տես 24.42)
- հրահալոցի շահագործումը (տես հատված 24):

## **08**

### **Հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման այլ ճյուղեր**

Հատվածը ներառում է բացահանքերում այլ հանքանյութերի արդյունահանումը, ինչպես նաև գետաբերուկային (այլովիալ) նստվածքներից, քարերի բնական քայքայման կամ աղաճահճային հարթավայրերի շահագործման արդյունքում բաց եղանակով այլ հանքանյութերի ստացումը: Արդյունահանվող նյութերը հիմնականում օգտագործվում են շինարարությունում (օրինակ՝ ավազը, քարերը և այլն), այլ նյութերի (կավի, գիպսի, կալցիումի և այլն) ու քիմիկատների արտադրությունում և այլն:

Այս հատվածում չի ներառվում արդյունահանույթի մշակումը, բացառությամբ մանրացումը, մաղումը, սեղմումը, մաքրումը, չորացումը, տեսակավորումը, խառնումը:

## 09

### **Հանքագործական արդյունաբերության հարակից գործունեություն**

Հատվածը ներառում է հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման բնագավառում վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով մատուցվող մասնագիտացված օժանդակ ծառայությունները: Այստեղ ներառվում են ավանդական եղանակներով իրականացվող հետախուզական գործունեության ծառայությունները՝ նավթի, մետաղական և ոչ մետաղական հանածոների երկրաբանական դիտարկումների, փորձանմուշներ վերցնելու համար հորատանցքերի գայլիկոնումը, փորձնական հորատումը, փորվածքի հեռացումը, հետախուզական հորանների մաքրումը, ջրահանումը, ցամաքեցումը:

## C

### **ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ**

Մշակող արդյունաբերությունում ներառված արտադրական միավորներն իրականացնում են նյութերի և բաղադրիչների քիմիական և ֆիզիկական վերափոխումը նոր արտադրատեսակների, թեև արտադրության սահմանման համար դա չի կարող լինել միակ չափանիշը (տես՝ թափոնների վերամշակման վերաբերյալ պարզաբանումները): Մշակման են ենթարկվում գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության, հանքագործական արդյունաբերության և բացահանքերի հումքանյութերը, ինչպես նաև մշակող արդյունաբերության այլ ճյուղերի արտադրանքը: Ընդհանուր առմամբ նյութերի, բաղադրիչների, արտադրատեսակների էական ձևափոխումը, նորոգումը, վերականգնումը դիտվում են որպես մշակող արդյունաբերության գործունեություն: Նման գործունեություն իրականացնող տնտեսա-

կան միավորները նյութերի մշակման ընթացքում, սովորաբար օգտագործում են մեխանիկական շարժաբերով մեքենաներ, բեռնման-բեռնաթափման և այլ սարքավորանք, թեև այստեղ ներառվում է նաև այն արտադրական միավորների գործունեությունը, որն իրականացվում է տնային պայմաններում կամ նյութերի, բաղադրիչների, արտադրատեսակների վերափոխումը նոր արտադրատեսակների կատարվում է ձեռքի աշխատանքի արդյունքում: Այս բաժնում դասակարգվում են նաև արտադրական գործընթացը և միևնույն տարածքում արտադրանքի իրացումն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը՝ հացի փռերը, հագուստի կտրի արհեստանոցները և այլն:

Մշակող արդյունաբերության արտադրական միավորներն իրականացնում են՝

- սեփական նյութերի մշակումը
- պայմանագրային հիմունքով այլ արտադրական կազմակերպությունների սեփականություն հանդիսացող նյութերի մշակումը
- պայմանագրային հիմունքով սեփական կամ ոչ սեփական նյութերի մշակման ամբողջ գործընթացի կազմակերպումը, պահպանելով սեփականության իրավունքը մտահղացման և պատրաստի արտադրանքի վերաբերյալ
- վերը նշված պայմանագրային գործողությունները

Մշակող արդյունաբերության արտադրական գործընթացների արդյունքում ստացվող նոր արտադրանքը համարվում է պատրաստի, եթե այն նախատեսված է անմիջական օգտագործման կամ սպառման համար, և կիսապատրաստվածք, եթե այն, որպես սկզբնական նյութ, ենթարկվում է հետագա մշակման: Օրինակ՝ արզնահողի զտման արտադրության արտադրանքը սկզբնական հումք է հանդիսանում այլումինի արտադրությունում. այլումինը սկզբնական հումք է հանդիսանում այլումինե լարի արտադրությունով զբաղվող կազմակերպություններում. այլումինե լարը սկզբնական հումք է հանդիսանում այլումինե լարից արտադրատեսակներ արտադրող կազմակերպության համար:

Մեքենաների և սարքավորանքի հատուկ բաղադրամասերի և մանրակների, պարագաների և հարմարանքների մասնագիտացված արտադրու-

թյունը սովորաբար դասակարգվում է համապատասխան մեքենաների և սարքավորանքի արտադրության դասում: Մեքենաների և սարքավորանքի ոչ յուրահատուկ բաղադրամասերի և մանրակների՝ շարժիչների, մխոցների, էլեկտրաշարժիչների, կափույրների, ժանանիվների, գնդառանցքակալների արտադրությունը դասակարգվում է նշված արտադրատեսակների արտադրության համապատասխան դասում, անկախ դրանից, թե ինչ մեքենաներում կամ սարքավորանքում են տեղադրվում այդ բաղադրամասերը և մանրակները:

Բացառություն է կազմում մեքենաների և սարքավորանքների պլաստմասսայե հատուկ բաղադրամասերի և պարագաների արտադրությունը, որն իրականացվում է կաղապարման կամ արտամղման եղանակներով, դասակարգվում է 22.2 խմբում:

Արտադրատեսակների արտադրության ընթացքում բաղադրամասերի հավաքումը համարվում է արտադրական գործունեություն: Այն ներառում է ինչպես սեփական արտադրության, այնպես և գնված պատրաստի բաղադրամասերի հավաքումը:

Թափոնների վերամշակումը՝ թափոնների վերածումը երկրորդային հումքի, դասակարգվում է «Թափոնների օգտագործում» խմբում (տես 38.3): Թեև թափոնների վերամշակումը կարող է ուղեկցվել դրանց ֆիզիկական կամ քիմիական վերափոխումով, այդ գործունեությունը չի դասվում «Մշակող արդյունաբերություն» հարվածին: Նշված գործունեության առաջնային նպատակը սովորաբար համարվում է նյութերի վերականգնումը կամ թափոնների վերամշակումը, հետևաբար այն դասակարգվում է E բաժնում՝ «Ջրամատակարարում. Կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում»: Պետք է նշել, որ օգտագործման համար պատրաստի արտադրատեսակների արտադրությունը, ի տարբերություն թափոնների վերամշակմանը, արտադրական գործունեություն է, նույնիսկ եթե որպես հումք արտադրությունում օգտագործվել է վերամշակված թափոնը: Օրինակ՝ արծաթի արտադրությունը կինոժապավենների թափոններից դասակարգվում է որպես արտադրական գործունեություն:

Արդյունաբերական, գրասենյակային և համանման մեքենաների և սարքավորանքի մասնագիտացված սպասարկումը և նորոգումը ընդհանուր



առմամբ դասակարգվում է 33 հատվածում («Մեքենաների և սարքավորանքի նորոգում, սպասարկում և տեղակայում»), համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային ապրանքների նորոգումը դասակարգվում է 95 հատվածում («Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում»), իսկ ավտոմեքենաների նորոգումը՝ 45 հատվածում («Ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ և մանրածախ առևտուր և նորոգում»): Մեքենաների և սարքավորանքի տեղակայումը, եթե այն իրականացվում է որպես մասնագիտացված գործունեություն, դասակարգվում է 33.20 դասում («Արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի տեղակայում»):

Որոշ դեպքերում հնարավոր չէ մշակող արդյունաբերության հատվածների հստակ սահմանազատումը դասակարգման այլ հատվածներից: Սովորաբար, մշակող արդյունաբերության կազմակերպություններում նյութերի մշակման արդյունքում ստանում են նոր արտադրատեսակներ: Միանշանակ չէ նաև «նոր արտադրատեսակ» հասկացության սահմանումը: Օրինակ, «Մշակող արդյունաբերություն» բաժնում ներառվում են մթերքի մշակմանն ուղղված գործունեության հետևյալ տեսակները՝

– թարմ ձկնեղենի մշակումը՝ խեցիներից ոստրեների արտազատումը, ձկան սուկիի անջատումը և այլն, բացառությամբ ձկնորսական նավերում իրականացվող մշակումը (տես 10.20)

– կաթի պաստերացումը և շալցումը (տես 10.51)

– կաշվի մշակումը (տես 15.11)

– բնափայտի կոնսերվացումը (տես 16.10)

– տպագրությունը և հարակից գործունեությունը (տես 18.1)

– դողերի պաշտպանաշերտի վերականգնումը (տես 22.11)

– ապրանքային բեռոնի արտադրությունը (տես 23.63)

– գալվանապատումը, մետաղապատումը, մետաղի ջերմամշակումը և ողորկումը (տես 25.61)

– մեքենաների կապիտալ նորոգումը կամ վերասարքավորումը, օրինակ՝ ներքին այրման շարժիչի (տես 29.10):

Գործունեության որոշ տեսակները, որոնք բնույթով կարող են որակվել որպես նյութի մշակմանն ուղղված գործունեություն, դասակարգվում են այլ հատվածներում:

Դրանք են՝

- փայտամթերումը, դասակարգվում է A բաժնում՝ «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն»

- գյուղատնտեսական արտադրանքի նախնական մշակումը, դասակարգվում է A բաժնում՝ «Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն և ձկնորսություն»

- սննդի պատրաստումը, տեղում անմիջական օգտագործման համար, դասակարգվում է 56 հատվածում՝ «Հանրային սննդի կազմակերպում»

- հանքաքարերի և այլ օգտակար հանածոների հարստացումը, դասակարգվում է B բաժնում, «Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում»

- կառույցների շինարարությունը և շինարարական հրապարակներում իրականացվող հավաքակցման աշխատանքները, դասակարգվում են F բաժնում՝ «Շինարարություն»

- ապրանքների խոշոր խմբերի բաժանումը մանր խմբաքանակների և ապրանքների ավելի փոքր խմբերի երկրորդային իրացումը, ներառյալ փաթեթավորումը և վերափաթեթավորումը կամ շալցումը (խմիչքների, քիմիական նյութերի), պինդ թափոնների տեսակավորումը, պատվիրատուի պատվերով համակարգիչների հավաքումը, ներկերի խառնումը, մեքանիզմները և այլն, ձևավորված, բայց ոչ նոր արտադրանքի արտադրությունը, դասակարգվում է G բաժնում՝ «Մեծածախ և մանրածախ առևտուր. արանսպորտային միջոցների և մոտոցիկլների նորոգում»:

**10 Սննդամթերքի արտադրություն**

**11 Խմիչքների արտադրություն**

**12 Ծխախոտային արտադրատեսակների արտադրություն**

**13 Մանածագործական արտադրատեսակների արտադրություն**

**14 Հագուստի արտադրություն**

**15 Կաշվի, կաշվե արտադրատեսակների արտադրություն**

**16 Փայտանյութի մշակում, փայտից, խցանակեղևից, ծղոտից և**

- հյուսկեն նյութերից արտադրատեսակների արտադրություն,  
բացի կահույքից
- 17 Թղթի և թղթե արտադրատեսակների արտադրություն
- 18 Պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների  
բազմացում
- 19 Կոքսի և թորած նավթամթերքի արտադրություն
- 20 Քիմիական նյութերի և քիմիական արտադրատեսակների  
արտադրություն
- 21 Դեղագործական արտադրանքի արտադրություն
- 22 Ռետինե և պլաստմասսայե արտադրատեսակների  
արտադրություն
- 23 Այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների  
արտադրություն
- 24 Հիմնական մետաղների արտադրություն
- 25 Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրություն,  
բացի մեքենաներից և սարքավորանքից
- 26 Համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական  
սարքավորանքի արտադրություն
- 27 Էլեկտրական սարքավորանքի արտադրություն
- 28 Մեքենաների և սարքավորանքի արտադրություն, չներառված  
ուրիշ խմբավորումներում
- 29 Ավտոմեքենաների արտադրություն
- 30 Այլ տրանսպորտային սարքավորանքի արտադրություն
- 31 Կահույքի արտադրություն
- 32 Արտադրատեսակների արտադրություն, չներառված ուրիշ  
խմբավորումներում
- 33 Մեքենաների և սարքավորանքի նորոգում և տեղադրում

## D

### **ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ**

## 35

### **Էլեկտրականության, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում**

Հատվածը ներառում է էլեկտրաէներգիայի, բնական գազի, գոլորշու և փաք ջրի մատակարարման հետ կապված գործունեությունը, որն իրականացվում է հիմնական ենթակառուցվածքների (ցանցի)՝ գծերի, խողովակաշարերի, մայրուղիների միջոցով: Նման ցանցերի պարամետրերը որոշակի նշանակություն չունեն: Տվյալ հատվածում ներառվում է էլեկտրաէներգիայի, բնական գազի, գոլորշու և փաք ջրի մատակարարումը արդյունաբերական կազմակերպություններին և բնակելի զանգվածներին: Արտադրությունը, ենթակառուցվածքների կառավարումը և արտադրանքի մատակարարումը վերջնական սպառողին կարող է իրականացվել նույն կազմակերպության կամ փարբեր կազմակերպությունների կողմից:

Այս հատվածը ներառում է նաև գոլորշու և լավորակ օդի մատակարարումը:

Այս հատվածում բացառվում է ջրամատակարարման և կոյուղու կոմունալ սպասարկման կազմակերպությունների գործունեությունը, (տես 36, 37 հատվածները): Այս հատվածում բացառվում է նաև հեռավոր տարածությունից խողովակաշարերով գազի տեղափոխումը:

## E

### **ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ, ԿՈՅՈՒՂԻ, ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄ**

Բաժինը ներառում է արդյունաբերական, կենցաղային փարբեր տեսակի պինդ և ոչ պինդ թափոնների կառավարման (հավաքում, մշակում, հեռացում), ինչպես նաև աղտոտված հողատարածքների մշակման հետ կապված

գործունեությունը: Կեղտաջրերի հավաքման և մաքրման արդյունքում ստացված ջուրը հեռացվում է կամ օգտագործվում է փարբեր արտադրական գործընթացներում: Ջրամատակարարումը նույնպես դասակարգվում է այս բաժնում, քանի որ ջրամատակարարման ծառայությունները փոխկապակցված են կոյուղաջրերի մաքրման ու մշակման հետ և հաճախ իրականացվում են նույն միավորի կողմից:

**36 Ջրի հավաքում, մշակում և բաշխում**

**37 Կոյուղի**

**38 Թափոնների հավաքում, մշակում և ոչնչացում, նյութերի վերականգնում**

**39 Թափոնների վնասազերծում և այլ մշակում**

## **F**

### **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Բաժինը ներառում է ընդհանուր շինարարությունը, շենքերի և ճարտարագիտական կառույցների շինարարության մասնագիտական աշխատանքները: Այստեղ ներառվում է նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից շենքերի, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակներում:

Ընդհանուր շինարարությունը ընդգրկում է ավարտուն բնակելի, վարչական, առևտրի, այլ կոմունալ-կենցաղային շենքերի, գյուղատնտեսական շինությունների և այլն, քաղաքացիական ճարտարագիտական կառույցների՝ մայրուղիների, փողոցների, կամուրջների, թունելների, երկաթուղիների, թռիչքադաշտերի, նավահանգիստների և այլ ջրային օբյեկտների, ոռոգման և կոյուղու համակարգերի, արդյունաբերական կառույցների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի, սպորտային կառույցների և այլնի շինարարություն: Նշված աշխատանքները կատարվում են կամ սեփական միջոցներով, կամ պայմանագրային հիմունքով, կամ էլ վարձարությամբ: Այդ աշխատանքների մի մասը, իսկ որոշ դեպքերում հիմնական աշխատանքների ամբողջ ծավալը, կարող են փոխանցվել այդ բնագավառում

ենթակապալառուներին: Այստեղ է դասակարգվում նաև այն միավորի գործունեությունը, որը պատասխանատվություն է կրում օբյեկտի լրիվ շինարարության համար:

Այս բաժնում նաև ընդգրկվում է շենքերի և քաղաքացիական ճարտարագիտական կառույցների նորոգումը:

Այս բաժնում ընդգրկված շենքերի ընդհանուր շինարարությունը դասակարգվում է 41 հատվածում, քաղաքացիական ճարտարագիտական կառույցների ընդհանուր շինարարությունը՝ 42 հատվածում, ընդհանուր շինարարության գործընթացի մաս կազմող մասնագիտական աշխատանքները՝ 43 հատվածում: Շինարարական սարքավորանքի վարձույթը գործարկուի (օպերատորի) հետ դասվում է շինարարության այն գործունեության տեսակին, որի դեպքում օգտագործվում է այդ սարքավորանքը:

Այս բաժինը ներառում է նաև հետագա վաճառքի համար նախատեսված շենքերի և քաղաքացիական ճարտարագիտական կառույցների, այլ օբյեկտների շինարարության հետ կապված նախապատրաստական, ֆինանսական, տեխնիկական և նյութական միջոցների համաձայնեցման աշխատանքները: Եթե այդ աշխատանքները կատարվում են շինարարական օբյեկտների ոչ հետագա վաճառքի համար, այլ վարձակալության հանձնման կամ մշակող արտադրության ծավալման համար, ապա նման գործունեությունը համապատասխանաբար դասակարգվում է անշարժ գույքի վարձակալության հանձնման կամ մշակող արտադրության գործունեության հետ կապված դասերում՝ ըստ շինարարական օբյեկտների շահագործման նպատակների:

## 41

### **Շենքերի շինարարություն**

Հատվածը ներառում է բոլոր տեսակի կառույցների ընդհանուր շինարարությունը: Այն ընդգրկում է նոր շինարարությունը, շինարարական օբյեկտների ընդլայնման կամ վերափոխման և նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կառուցվածքներից շենքերի, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակում:

Ընդգրկվում է ավարտուն բնակելի, վարչական, առևտրային նպատակների համար շենքերի, գյուղատնտեսական շինությունների, կոմունալ-կենցաղային և քաղաքացիական կառույցների և այլնի շինարարությունը:

## 42

### **Քաղաքացիական շինարարություն**

Հատվածը ներառում է քաղաքացիական շինարարության կառույցների ընդհանուր շինարարությունը: Այն ընդգրկում է նոր շինարարությունը, շինարարական կառույցների ընդլայնման կամ վերափոխման, նորոգման աշխատանքները, պատրաստի բլոկավոր կոնստրուկցիաներից կառույցների, ինչպես նաև ժամանակավոր շինությունների կանգնեցումը շինարարական հրապարակում:

Այս հատվածը ներառում է քաղաքացիական շինարարության խոշոր կառույցների՝ մայրուղիների, փողոցների, կամուրջների, թունելների, երկաթուղիների, թռիչքադաշտերի, նավահանգիստների և այլ ջրային կառույցների, ոռոգման, կոյուղու համակարգերի, արդյունաբերական կառույցների, խողովակաշարերի, էլեկտրահաղորդման գծերի, սպորտային կառույցների և այլնի շինարարություն:

Նշված աշխատանքները կատարվում են սեփական միջոցներով, պայմանագրային հիմունքով կամ վարձատրությամբ: Այդ աշխատանքների մի մասը, իսկ որոշ դեպքերում հիմնական աշխատանքների ամբողջ ծավալը կարող են փոխանցվել ենթակապալառուներին:

## 43

### **Մասնագիտացված շինարարական գործունեություն**

Հատվածը ներառում է մասնագիտացված շինարարական գործունեությունը (որոշակի ուղղությամբ)՝ շենքերի և քաղաքացիական շինարարության կառույցների շինարարական հրապարակների նախապատրաստումը և մասնագիտացված ծառայությունների մատուցումը:

Այն մեկ ուղղությամբ մասնագիտացված, հատուկ հմտություն կամ սարքավորանք պահանջող գործունեություն է, որն ընդհանուր է փարբեր տեսակի շենքերի և քաղաքացիական շինարարության կառույցների համար՝ ցցերի խփումը, հիմնադրումը, ներքին հաղորդակցուղիների հավաքակցման (մոնտաժային), բեպոնային, աղյուսի և քարի շարման, փայտամածերի և լաստակների, փանիքածածկերի հավաքման և այլ աշխատանքները: Մերառական պողպատե կոնստրուկցիաների կանգնեցումը ներառվում է այս հատվածում, եթե դրանց մասերը չեն արտադրվում այդ ծառայությունը մատուցող կազմակերպությունում: Մասնագիտացված շինարարական աշխատանքները կատարվում են հիմնականում ենթակապալային եղանակով, թեև որոշ դեպքերում, հիմնականում նորոգման հետ կապված շինարարական աշխատանքների, դրանք անմիջականորեն հսկվում են անշարժ գույքի սեփականատիրոջ կողմից:

Այս հատվածում ընդգրկվում են շինարարության ավարտական փուլում իրականացվող շինարարական աշխատանքները:

Հավաքակցման (մոնտաժային) աշխատանքները ներառում են բոլոր տեսակի կոմունալ սարքավորանքի տեղադրումը, ինչն ապահովում է կառույցի նպատակային գործումը: Այդ աշխատանքները սովորաբար իրականացվում են շինարարական տեղամասերում, սակայն որոշ տեսակները կարող են կատարվել մասնագիտական արհեստանոցներում: Ընդգրկվում են ջրմուղ-կոյուղու, ջերմա-, գազամատակարարման տեղադրման փականագործական աշխատանքները, ջեռուցման և օդի լավորակման համակարգերի, այլեհավաքների, պահպանական ազդանշանման համակարգերի տեղադրումը, այլ էլեկտրահավաքակցման աշխատանքները, ցրցայտիչ հակահրդեհային համակարգերի, վերելակների, շարժասանդուղիների և այլնի հավաքակցումը: Ներառվում են նաև ջրա-, ջերմա-, ձայնամեկուսիչ աշխատանքները, թերթավոր մետաղով թիթեղումը, առևտրական սառեցնող համակարգերի տեղադրումը, ճանապարհների, երկաթուղիների, նավահանգիստների, օդանավակայանների և համանման կառույցների համար լուսավորման և ազդանշանման համակարգերի տեղակայումը: Բացի այդ, ներառվում են վերը նշված հավաքակցման աշխատանքների նույն տեսակի նորոգման աշխատանքները:



Շինարարության ավարտական փուլի գործունեությունը ներառում է շինարարությունը եզրափակող, շենքերի և շինությունների հարդարման աշխատանքները՝ ապակեպատումը, սվաղի և ներկարարական աշխատանքները, պատերի կամ ծածկերի երեսապատումը սալիկներով, կղմինդրով, պատերի պաստառապատումը, հատակի ծածկապատումը սալերով կամ այլ նյութերով՝ մանրադաշտակով, գորգերով, հատակների հղկապաշումը, գորգե պատվածքների վրաքաշումը, ծայնամեկուսիչ աշխատանքները, շենքերի արտաքին պատերի մաքրումը և այլ աշխատանքները: Բացի այդ, ներառվում են շինարարության ավարտական փուլի վերը նշված աշխատանքների նույն տեսակի նորոգման աշխատանքները:

## **G**

### **ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒՐ.**

### **ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄՈՏՈՑԻԿԼՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ**

Այս բաժինը ներառում է բոլոր տեսակի ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուրը (ապրանքների վաճառքն առանց ձևափոխման), ինչպես նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների նորոգումը: Ապրանքների վաճառքն առանց ձևափոխման ներառում է առևտրին բնորոշ որոշակի օժանդակ գործողություններ, օրինակ՝ տեսակավորում, ապրանքների չափազատում և բաժանում խմբաքանակների, տեսակախառնում (օրինակ՝ գինու կամ ավազի), շալցում (շերտի լվացմամբ կամ առանց լվացման), փաթեթավորում, բաժանում և վերաբաշխում (մեծ խմբաքանակը՝ փոքր խմբաքանակների), պահում (այդ թվում՝ պաղեցում կամ սառեցում), գյուղատնտեսական մթերքի մաքրում և չորացում, փայտաթելքային սալերի կամ մեդալեթիթեղների կտրատում:

45 հատվածը ներառում է ավտոմեքենաների կամ մոտոցիկլների առևտրի և նորոգման հետ կապված բոլոր գործառնությունները, 46 և 47 հատվածները՝ այլ ապրանքների առևտուրը: 46 հատվածի (մեծածախ առևտուր) և 47 հատվածի (մանրածախ առևտուր) տարբերությունները պայմանավորված են սպառողի տեսակով:

Մեծածախ առևտուրը՝ նոր և գործածված ապրանքների վերավաճառք է (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) մանրածախ առևտրականներին, արդյունաբերական, առևտրային և մեծածախ առևտրով զբաղվող այլ կազմակերպություններին, ինչպես նաև գործակալներին և միջնորդներին: Մեծածախ առևտուրը ներառում է առևտրականների, բորսային գործակալների, արդյունաբերության սպասարկմամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպությունների, արտահանողների, ներկրողների, կոոպերատիվ սկզբունքներով մեծաքանակ գնումներ կատարող միավորումների, մշակող և հանքարդյունահանող կազմակերպություններին կից վաճառքի գծով գործող բաժանմունքների և գրասենյակների (որոնց գործառույթները չեն սահմանափակվում պատվերների ընդունմամբ և գործարաններից ու հանքերից արտադրանքի անմիջական առաքմամբ) գործունեությունը: Մեծածախ առևտրով զբաղվող առևտրականները, շատ դեպքերում սեփական միջոցներով իրականացնում են մեծ խմբաքանակով գնած և չրեասակավորված ապրանքների շտապավորում, չափազատում, փոքր խմբաքանակների բաժանում, վերախմբավորում, վերափաթեթավորում (օրինակ՝ դեղագործական արտադրանքի), պահում, պաղեցում, ապրանքի տեղ հասցնում և տեղավորում, ապրանքի գովազդում և պիտակների մշակում: Մանրածախ առևտուրը՝ հիմնականում սեփական սպառման կամ տնային օգտագործման համար լայն զանգվածներին նոր և գործածված ապրանքների վերավաճառք է (ապրանքի վաճառք առանց ձևափոխման), որն իրականացվում է խանութներում, հանրախանութներում, կրպակներում, փոստով պատվերներ կատարող կազմակերպությունների, շրջելով առևտուր իրականացնող կամ փողոցի առևտրականների, սպառողական կոոպերատիվների, աճուրդով վաճառքը կազմակերպող գրասենյակների և համանման կազմակերպությունների միջոցով: Սովորաբար մանրածախ առևտրով զբաղվող վաճառականները սեփականության իրավունք են ձեռք բերում իրենց կողմից վաճառվող ապրանքի նկատմամբ, թեև որոշ դեպքերում ներկայանում են ապրանքի սեփականատիրոջ անունից որպես գործակալ և վաճառքն իրականացնում են կամ ապրանքագրերով կամ պայմանագրային սկզբունքներով:

## 45

### **Ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ ու մանրածախ առևտուր և նորոգում**

Հասկանալի է ներառում է ավտոմեքենաների, ներառյալ բեռնատարներն ու ավտոբարձակները, և մոտոցիկլների հետ կապված գործունեության բոլոր տեսակները (բացառությամբ դրանց արտադրությունը և վարձակալության հանձնումը), այն է. նոր և օգտագործված ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ և մանրածախ առևտուրը, նորոգումը և տեխնիկական սպասարկումը, ավտոմեքենաների և մոտոցիկլների պահեստամասերի և պարագաների մեծածախ և մանրածախ առևտուրը: Այսպես ներառվում է նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների մեծածախ և մանրածախ առևտրի հետ կապված աճուրդների կազմակերպող և ինտերնետի միջոցով մեծածախ առևտուրն իրականացնող հանձնակատար գործակալների գործունեությունը: Այս հասկանալի ներառում է նաև ավտոմեքենաների և մոտոցիկլների լվացումը, փայլեցումը և այլն:

Այս հասկանալի չի ներառում շարժիչային վառելիքի, քսանյութերի, պաղեցնող նյութերի մանրածախ առևտուրը և ավտոմեքենաների ու մոտոցիկլների վարձակալության հանձնման գործունեությունը:

## 46

### **Մեծածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից**

Հասկանալի է ներառում է ներքին և արտաքին մեծածախ առևտուրը (ներկրում/արտահանում) սեփական միջոցներով, վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով (առևտուր միջնորդների միջոցով):

Մեծածախ առևտուրը՝ նոր և գործածված ապրանքների վերավաճառք է (ապրանքի վաճառք առանց ձևափոխման) մանրածախ առևտրականներին, արդյունաբերական, առևտրային կամ մասնավոր սպառողներին ու մեծածախ առևտրով զբաղվող այլ կազմակերպություններին, ինչպես նաև գործակալներին և միջնորդներին, որոնք ապրանքը գնում կամ վաճառում են վերը նշված առևտրականների կամ կազմակերպությունների անունից:

Այսպես ներառվում է մեծածախ առևտրով զբաղվող միջնորդների, բորսային գործակալների, արդյունաբերության սպասարկման մեծածախ առևտրի բնագավառում մասնագիտացված կազմակերպությունների, արտահանողների, ներկրողների, կոոպերատիվ սկզբունքներով մեծաքանակ գնումներ կատարող միավորումների գործունեությունը, մշակող և հանքարդյունահանող կազմակերպություններին կից մեծածախ առևտրի գծով գործող բաժանմունքների և գրասենյակների գործունեությունը, ուղղված սեփական արտադրանքի իրացմանը, չսահմանափակվելով պարտքերի ընդունմամբ կամ արտադրանքի անմիջական առաքմամբ: Այսպես ներառվում է նաև կոմիսիոն սկզբունքով վաճառքի համար ապրանքներ գնող առևտրականների, մեծաքանակ ապրանքի գնորդների և գործակալների, մթերողների և գյուղատնտեսական արտադրանքը իրացնող կոոպերատիվ միավորումների գործունեությունը:

Մեծածախ առևտրով զբաղվող առևտրականները իրականացնում են հիմնականում սեփական միջոցներով, մեծ խմբաքանակով չտեսակավորված ապրանքի գնումը, տեսակավորումը, չափազատումը, փոքր խմբաքանակների բաժանումը, վերախմբավորումը, վերափաթեթավորումը, պահումը, պաղեցումը, ապրանքի տեղ հասցնումը և տեղավորումը:

Բացառվում է՝

- ավտոմեքենաների, ավտոկցանքների և մոտոցիկլների մեծածախ առևտուրը (տես, 45.1, 45.4),
- ավտոմեքենաների պարագաների մեծածախ առևտուրը (տես 45.31, 45.40),
- ապրանքների վարձույթը և լիզինգը (տես 71 հատվածը),
- երրորդ կողմի համար ապրանքների փաթեթավորումը, հեղուկ և գազակերպ ապրանքների շաղցումը, այդ թվում՝ խառնումը, զտումը (տես 82.92):

## Մանրածախ առևտուր, բացի ավտոմեքենաների և մոտոցիկլների առևտրից

Հափվածը ներառում է նոր և գործածված, անձնական օգտագործման կամ կենցաղային ապրանքների վերավաճառքը (վաճառք առանց ձևափոխման) խանութներում, փողավարներում, կրպակներում, հանրախանութներում, փոստով պատվերներ ընդունող կազմակերպությունների, փողոցում առևտուր իրականացնող վաճառողների, սպառողական կոոպերատիվների, աճուրդով վաճառք կազմակերպող կազմակերպությունների և այլնի միջոցով: Առաջին հերթին մանրածախ առևտուրը դասակարգվում է ըստ ապրանքների վաճառահանման կետի՝ խանութներում (47.1–47.7 խմբերը), խանութներից դուրս (47.8–47.9 խմբերը): Խանութներում մանրածախ առևտուրը ներառում է նաև օգտագործված ապրանքների մանրածախ առևտուրը (47.79 դասը): Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտուրը իր հերթին բաժանվում է մասնագիտացված (47.2–47.7 խմբերը) և ոչ մասնագիտացված (47.1 խումբը) մանրածախ առևտրի: Վերը նշված խմբերը ստորաբաժանվում են ըստ վաճառվող ապրանքատեսակների նշանակության: Խանութներից դուրս մանրածախ առևտուրը բաժանվում է ըստ առևտրի տեսակի՝ կրպակներում և շուկաներում (47.8 խումբը), խանութներից դուրս այլ մանրածախ առևտուր՝ փոստով պատվերների ընդունում և ապրանքների առաքում, ապրանքների տուն հասցնում, վաճառք՝ ավտոմատների միջոցով, և այլ (47.9 խումբը): Տվյալ հափվածը ներառում է սպառողական ապրանքների մանրածախ առևտուրը: Այստեղ, օրինակ, չի ներառվում հացահատիկի, հանքաքարերի, արդյունաբերական նշանակության մեքենաների ու սարքավորանքի և համանման ապրանքների մանրածախ առևտուրը:

Այս հափվածը ներառում է ցուցահանդեսներում ներկայացվող և վաճառքի ենթակա հեղկյալ ապրանքների՝ համակարգիչների, տպիչների համար թղթի, ներկերի, բնափայտի և համանման ապրանքների մանրածախ առևտուրը, նույնիսկ եթե դրանք նախատեսված չեն անձնական օգտագործման կամ կենցաղային սպառման համար:

Մանրածախ առևտուրը ընդգրկում է նաև ապրանքների մշակման փարբեր գործողությունները՝ կշռածրարումը, փեսակավորումը, չափազատումը, փաթեթավորումը, որոնց արդյունքում չեն փոխում ապրանքների հիմնական հատկությունները:

Այս հատվածում ներառվում է նաև մանրածախ առևտրի բնագավառում գործող միջնորդների, ինչպես նաև աճուրդային կազմակերպությունների գործունեությունը:

Բացառվում է՝

- գյուղացիական փոխտնտեսությունների արտադրանքի իրացումն անմիջապես այդ փոխտնտեսությունների կողմից (տես 01 հատվածը),
- ապրանքների արտադրությունը և իրացումը, որը դասակարգվում է որպես արտադրություն (տես 10-32 հատվածները),
- մեքենաների, մոտոցիկլների և դրանց մասերի առևտուրը (տես 45 հատվածը),
- հացահատիկի, հանքաքարերի, անմշակ նավթի, արդյունաբերական քիմիկատների, սև մետաղագործության արտադրանքի, արդյունաբերական մեքենաների և սարքավորանքի առևտուրը (տես 46 հատվածը),
- սննդամթերքի և խմիչքների վաճառքը, տեղում սպառման համար կամ պատրաստի կերակրատեսակների վաճառքը՝ առաքմամբ (տես 56 հատվածը),
- անձնական օգտագործման և կենցաղային ապրանքների հանձնումը վարձակալության կամ վարձույթով (տես 77.2 խումբը):

## **H**

### **ՓՈՒՆԱԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՍԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

Բաժինը ներառում է փրանսպորտային գործունեությունը՝ չվացուցակի համաձայն կամ չվացուցակից դուրս իրականացվող մարդատար և բեռնատար երկաթուղային, ցամաքային, ջրային, օդային փոխադրումները, խողովակաշարերով փոխադրումը և փրանսպորտային գործունեության հետ կապված ծառայությունների մատուցումը՝ ուղևորների ու բեռների կուրակիչների (փերմինալների) և կայանատեղերի շահագործումը, բեռների մշակումը,

պահումը և այլն: Այս բաժինը ներառում է նաև տրանսպորտային միջոցների և սարքավորանքի հանձնումը վարձակալության՝ վարորդով կամ օպերատորով, ինչպես նաև փոստային և սուրհանդակային ծառայությունները:

Բացառվում է՝

- տրանսպորտային սարքավորանքի, բացառությամբ ավտոմեքենաները, հիմնական նորոգումը կամ վերափոխումը (տես 33.1),
- ավտոճանապարհների, երկաթուղային ճանապարհների, նավահանգիստների, օդանավակայանների շինարարությունը, նորոգումը, սպասարկումը (տես 42 հատվածը),
- տրանսպորտային միջոցների և սարքավորանքի հանձնումը վարձակալության՝ առանց վարորդի կամ օպերատորի (տես 77.1, 77.3):

**49 Ցամաքային տրանսպորտի գործունեություն և փոխադրում**

**խողովակաշարերով**

**50 Ջրային տրանսպորտի գործունեություն**

**51 Օդային տրանսպորտի գործունեություն**

**52 Պահեստավորում և տրանսպորտային օժանդակ գործունեություն**

**53 Փոստային և սուրհանդակային գործունեություն**

**ԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ**

Բաժինը ներառում է կարճաժամկետ բնակության համար հաճախորդներին բնակատեղիների տրամադրման և/կամ տեղում սպառման համար նախատեսված կերակուրների ու խմիչքների պատրաստման, խմիչքների վաճառքի հետ կապված ծառայությունների մատուցումը: Այստեղ ընդգրկված լրացուցիչ ծառայությունների քանակը և տեսակը կարող են զգալիորեն տարբերվել նշված գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների համար:

Բնակարանների հանձնումը վարձակալության երկար ժամկետով, ամսական կամ տարեկան կտրվածքով, դասակարգվում է որպես անշարժ գույքի գործառնություն (բաժին L) և այս բաժնում չի ներառվում: Բացառվում է նաև կերակուրների ու խմիչքների պատրաստումը, եթե դրանք նախա-

տեսված չեն տեղում անմիջական սպառման համար (դասակարգվում է C բաժնում, որպես սննդամթերքի արտադրություն) կամ դրանց վաճառքը, որն իրականացվում է մեծածախ և մանրածախ առևտրի կետերի միջոցով:

**55**

### **Կացության կազմակերպում**

Հատվածը ներառում է կարճ ժամկետով բնակատեղիների տրամադրում՝ զբոսաշրջիկների և այլ հաճախորդների կացությունը ապահովելու համար: Այստեղ ընդգրկվում է նաև բնակատեղիների տրամադրումը ավելի երկար ժամկետով՝ ուսանողների, աշխատավորների և համանման այլ անձանց բնակության համար: Նշված գործունեությամբ զբաղվող որոշ միավորներ տրամադրում են միայն բնակատեղիներ, բնակության կամ կարճաժամկետ կացության համար, մինչդեռ այլ միավորները բնակության հետ մեկտեղ մատակարարում են նաև պատրաստի սնունդ և հանգստի կազմակերպման համար տարբեր սարքավորանք:

Այս հատվածում բացառվում է բնակարանների հանձնումը վարձակալության երկարապլան ժամկետով, սովորաբար ամսական կամ տարեկան կտրվածքով, բնակության համար: Նման ծառայությունը դասակարգվում է որպես անշարժ գույքի հետ կապված գործառնություն (բաժին L):

**56**

### **Հանրային սննդի կազմակերպում**

Հատվածը ներառում է անմիջական տեղում սպառման համար պատրաստի կերակրատեսակների, ինչպես նաև կերակրատեսակների հետ մատուցվող խմիչքների վաճառքը և սպասարկումը ռեստորաններում, սրճարաններում, այդ թվում՝ ինքնասպասարկման կամ պատրաստված սննդի դուրս տանելու հնարավորությամբ, վաճառասեղանի կանգնակի մոտ, նստելատեղերով կամ առանց նստելատեղերի: Որոշիչ գործոնն է՝ պատրաստի սննդի մատուցումը տեղում անմիջական սպառման համար, այլ ոչ թե սպասարկման հարմարավետությունը: Այստեղ չի ներառվում անմիջական կամ տեղում սպառման համար չնախատեսված պատրաստի սննդի



արտադրությունը, ինչպես նաև սննդամթերքի մշակումը (տես 10 հատվածը «Սննդամթերքի արտադրություն» և 11 հատվածը «Խմիչքների արտադրություն»), ինչպես նաև պատրաստի սննդի կամ մշակված սննդամթերքի իրացումը առևտրի կետերի միջոցով (տես բաժին G «Մեծածախ և մանրածախ առևտուր»):

## J

### ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ

Բաժինը ներառում է տեղեկատվական և մշակութային արտադրանքի արտադրությունը և փարածումը, այդ արտադրանքի փոխանցման կամ փարածման միջոցների ապահովումը, ինչպես նաև տվյալների կամ տեղեկատվության փոխանցման հաղորդակցողիների, տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում գործունեությունը, տվյալների կամ այլ տեղեկատվության մշակման ծառայությունները:

Այս բաժնի հիմնական բաղադրիչներն են՝ հրատարակչական գործունեությունը (58 հատվածը), ներառյալ ծրագրային ապահովման հրատարակությունը, կինոֆիլմերի և ձայնագրությունների հրատարակումը (59 հատվածը), ռադիո- և հեռուստածրագրերի պատրաստումը և հեռարձակումը (60 հատվածը), հեռահաղորդակցության ծառայությունները (61 հատվածը), տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում գործունեությունը (62 հատվածը), տեղեկատվական այլ ծառայությունների մատուցումը (63 հատվածը):

Հրատարակչական գործունեությունը ներառում է տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերաբերյալ հեղինակային իրավունքի ձեռք բերումը և դրա ներկայացումը լայն հասարակությանը՝ ապահովելով տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերարտադրումը և փարածումը փարքեր ձևերով: Այս բաժնում ներառվում են հրատարակության բոլոր ձևերը (տպագիր, ձայնագրած կամ էլեկտրոնային տեսքով, ինտերնետում տեղադրված), ինչպես նաև տեղեկատվական արտադրանքի ներկայացումը այլ ձևերով, օրինակ՝ տեղեկագրքերը խորասկավառակների վրա և այլ: 59, 60, 61 հատվածներում ներառված հեռուստառադիոծրագրերի պատրաստումը:

րասպանան և հեռարձակման հետ կապված գործունեությունը արտացոլում է այդ գործընթացի տարբեր փուլերը: Առանձին ծառայություններն, օրինակ՝ կինո- և տեսաֆիլմերի արտադրությունը, ներառված են 59 հատվածում, մյուս կողմից որևէ ալիքի լրիվ հեռուստատեսային ծրագրի ստեղծման որոշ ծառայությունները ներառվում են 59 հատվածում, իսկ այլ ծառայությունները, օրինակ՝ նորությունների թողարկումը ուղիղ եթերում, ներառվում է 60 հատվածում: 60 հատվածում ներառվում է նաև այդ թողարկման հեռարձակման ծառայությունները՝ ծրագրի արտադրողի կողմից: Հեռուստատեսային ծրագրերի հեռարձակումը երրորդ անձանց կողմից, առանց ծրագրերի բովանդակության փոփոխության, ներառվում է 61 հատվածում: Հեռուստառադիոծրագրերի նման հեռարձակումը իրականացվում է ռադիոհեռարձակման, արբանյակային և մալուխային համակարգերի միջոցով:

## 58

### Հրատարակչական գործ

Հատվածը ներառում է գրքերի, բրոշյուրների, գովազդային թերթիկների, բառարանների, հանրագիտարանների, տալիսների, քարտեզների և գծագրերի, թերթերի, ամսագրերի և այլ պարբերական հրատարակությունների, տեղեկագրքերի, հասցեացուցակների և համանման հրատարակությունների հրատարակումը, այդ թվում՝ ծրագրային ապահովման հրատարակությունը: Հրատարակչական գործունեությունը ներառում է տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերաբերյալ հեղինակային իրավունքի ձեռք բերումը և դրա ներկայացումը լայն հասարակությանը, ապահովելով տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերաբերյալ և տարածումը տարբեր ձևերով: Ներառվում են հրատարակության բոլոր ձևերը (տպագիր, ձայնագրած կամ էլեկտրոնային տեսքով, ինտերնետում տեղադրված), ինչպես նաև տեղեկատվական արտադրանքի ներկայացումը այլ ձևերով, օրինակ՝ տեղեկագրքերը խփասկավառակների վրա և այլ, բացառությամբ կինոնկարների արտադրությունը:

Բացառվում է՝

- կինո- և տեսաֆիլմերի, ԴՎԴ-ների (DVD) և համանման գրառված կրիչների հրատարակությունը (տես 59 հատվածը),
- հեռուստատեսային ծրագրերի արտադրությունը, ձայնա- և տեսա- նյութերի բնօրինակների գրանցումը (տես 59 հատվածը),
- տպագրական գործը (տես 18.11, 18.12),
- կրիչների վրա գրառված տեղեկատվության բազմացումը (տես 18.20):

## 59

### **Կինո- և տեսաֆիլմերի, հեռուստատեսային ծրագրերի արտադրություն, երաժշտական և այլ ձայնագրությունների հրատարակություն**

Հատվածը ներառում է կինոթատրոններում կամ հեռուստատեսությամբ ցուցադրելու համար ժապավենների կամ սկավառակների վրա գեղարվեստական կամ ոչ գեղարվեստական կինոնկարների, տեսաֆիլմերի արտադրությունը և օժանդակ ծառայությունները՝ ֆիլմերի խմբագրումը, մոնտաժումը, կրկնօրինակումը և այլ, սեփական և այլ արտադրության ֆիլմերի տարածումը, ինչպես նաև սեփական և այլ արտադրության ֆիլմերի ցուցադրումը: Այստեղ ներառվում է նաև այլ արտադրության ֆիլմերի գնման, դրանց տարածման իրավունքի ձեռք բերման և վաճառքի ծառայությունները:

Հատվածը ներառում է նաև երաժշտական և այլ ձայնագրությունների հրատարակությունը՝ երաժշտական ստեղծագործության բնօրինակի ձայնագրումը, մշակումը, վերարտադրումը, տարածումը, ձայնագրման ստուդիաներում կամ այլ տեղերում ձայնագրության օժանդակ ծառայությունները:

## 60

### **Հեռուստառադիոծրագրերի կազմում և հեռարձակում**

Հատվածը ներառում է հեռուստառադիոծրագրերի՝ նորությունների, ժամանցային ծրագրերի, բանավեճերի ու համանման այլ ծրագրերի կազմման և հեռարձակման կամ տարածման իրավունքով ձեռքբերված պատրաստի

հեռուստառադիոձրագրերի հեռարձակման հետ կապված գործունեությունը: Այսպես ներառվում է նաև տվյալների փոխանցումը, սովորաբար երբ այն իրականացվում է հեռուստառադիոհեռարձակման համակարգում:

Հեռուստառադիոհեռարձակման համար օգտագործվում են տարբեր տեխնոլոգիաներ՝ եթերի, արբանյակային կապի, մալուխային ցանցի կամ ինտերնետի միջոցով:

Այս հատվածը ներառում է նաև սահմանափակ լսարանի համար նախատեսված նորությունների, սպորտային մրցումների, կրթական, երիտասարդական և համանման այլ ծրագրերից ամբողջական ծրագրի բնօրինակի կազմումը երրորդ կողմի համար՝ բաժանորդային կամ վճարային կարգով հեռարձակման նպատակով:

Բացառվում է՝

- մալուխային կամ այլ բաժանորդային ցանցերով ծրագրերի տարածումը (տես 61 հատվածը):

## **61**

### **Հեռահաղորդակցություն**

Հատվածը ներառում է հեռահաղորդակցական կապի ապահովման գործունեությունը՝ ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը և դրա հետ կապված ծառայությունների մատուցումը: Այդ գործողությունների իրականացման համար հաղորդիչ միջոցները կարող են հիմնվել մեկ կամ մի քանի համակցված տեխնոլոգիաների վրա: Այս հատվածում ներառված ծառայությունները ուղղված են միայն տեղեկատվության փոխանցմանը և չեն առնչվում բովանդակային մասի ստեղծմանը (ծրագրերի կազմումը դասակարգվում է 60 հատվածում): Այս հատվածում ներառված գործունեությունը ըստ տեսակների մանրամասնեցնելու համար, հաշվի են առնվում օգտագործվող ենթակառուցվածքների տեսակը:

Հեռուստատեսային ազդանշանների փոխանցումը կարող է ներառել հեռուստաալիքով հեռարձակվող ամբողջական ծրագրի բաժանումը փաթեթների:

## 62

### **Ծրագրային ապահովման մշակում, խորհրդատվություններ և հարակից գործունեություն համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում**

Հատվածը ներառում է համակարգչային տեխնոլոգիաների բնագավառում հետևյալ մասնագիտական ծառայությունների մատուցումը՝ ծրագրային ապահովման մշակումը, փոփոխությունների կատարումը, փորձարկումը, աջակցումը, համակարգչային համակարգերի՝ տեխնիկական ապահովման, ծրագրային ապահովման և կապի տեխնոլոգիաների մշակումը և նախագծումը, ներցանցային կառավարումը և պատվիրատուների համար համակարգչային համակարգերի ստեղծումը և/կամ տվյալների մշակման միջոցների սպասարկումը, համակարգիչային համակարգերի կիրառման հետ կապված այլ մասնագիտական և տեխնիկական գործունեությունը:

## 63

### **Տեղեկատվական ծառայությունների մատուցում**

Այս հատվածը ներառում է ցանցում որոնման պորտալների (*web search portals*), կայքերի տեղաբաշխման (*web hosting*), տվյալների մշակման հետ կապված գործունեությունը, ինչպես նաև հիմնականում տեղեկատվության մատակարարմանն առնչվող այլ գործունեությունը:

## K

### **ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Բաժինը ներառում է ֆինանսական ծառայությունների մատուցման հետ կապված գործունեությունը, ներառյալ ապահովագրությունը, վերապահովագրությունը, կենսաթոշակային ապահովությունը, ինչպես նաև ֆինանսական ծառայությունների արդյունավետությանը նպաստող գործունեությունը:

Այս բաժինը ներառում է նաև ակտիվների տեղաբաշխման հետ կապված հոլդինգ ընկերությունների, վարկերի, դրամական միջոցների տրամադրման և համանման ֆինանսական միջնորդական գործունեությունը:

## 64

### **Ֆինանսական միջնորդություն, բացի ապահովագրությունից և կենսաթոշակային ապահովությունից**

Հարվածը ներառում է ֆինանսական միջոցների ներգրավման և տարաբաշխման հետ կապված գործունեությունը, բացառությամբ ապահովագրությունը, պարտադիր սոցիալական ապահովագրությունը կամ կենսաթոշակային ապահովությունը:

Հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ ազգային ինստիտուցիոնալ կառուցվածքը կարող է էական դեր ունենալ այս հարվածի սահմաններում կազմակերպությունների դասակարգման համար:

## 65

### **Ապահովագրություն, վերաապահովագրություն և կենսաթոշակային ապահովություն, բացի պարտադիր սոցիալական ապահովագրության**

Հարվածը ներառում է մշտական պարբերական մուծումների, ապահովագրական պոլիսների և վճարումների երաշխավորված տարաբաշխումը, ֆինանսական ակտիվների պորտֆելի ձևավորման նպատակով, հետագայում պահանջագրերի համաձայն հատուցման համար: Այստեղ ներառվում է ապահովագրական և վերաապահովագրական գործունեությունը:

## 66

### **Ֆինանսական միջնորդության և ապահովագրության ոլորտում օժանդակ գործունեություն**

Հարվածը ներառում է ֆինանսական միջնորդության հետ կապված կամ ֆինանսական միջնորդությանն առնչվող ծառայությունների մատուցումը, բացառությամբ ֆինանսական միջնորդության ծառայությունները: Այս

հատվածի առաջնային բաժանումը ըստ խմբերի կատարված է համաձայն ֆինանսական գործառնությունների տեսակների կամ ֆինանսական ապահովության ձևերի:

**L**

### **ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Բաժինը ներառում է սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հետ կապված գործառնությունները՝ առուվաճառքը, անշարժ գույքի հանձնումը վարձակալության, գնահատումը, վարկատրուի կողմից անշարժ գույքի տիրապետումը մինչև վարկառուի պարտքի մարումը և այլն: Այս բաժինը ներառում է գործակալությունների, գործակալների, գործարքային միջնորդների, այդ թվում՝ վարձատրությանը կամ պայմանագրային հիմունքով իրականացվող գործունեությունը:

Այս բաժինը ներառում է նաև անշարժ գույքի կառավարումը և անշարժ գույքի վերաբերյալ սեփականության իրավունքի սահմանումը:

**68**

### **Անշարժ գույքի հետ կապված գործունեություն**

**M**

### **ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Բաժինը ներառում է մասնագիտական, գիտա-տեխնիկական գործունեությունը, որը պահանջում է բարձրակարգ կրթություն, մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ՝ սպառողներին ծառայություններ մատուցելու համար:

**69**

### **Իրավաբանական և հաշվապահական գործունեություն**

Հատվածը ներառում է փաստաբանական գործունեություն իրականացնող միավորների կողմից այլ անձանց շահերի պաշտպանությունը կամ անմիջական հսկողության սահմանումը քրեական, քաղաքացիական,

աշխատանքային, վարչական, վարչարարական բնույթի գործերի քննության ընթացքում, իրավաբանական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից խորհրդարավական, ներկայացուցչական, միջնորդական ծառայությունների մատուցումը, ներառյալ իրավաբանական անձանց պետական գրանցման, հեղինակային և արտոնագրային իրավունքի գրանցման հետ կապված փաստաթղթերի, պայմանագրերի, համաձայնագրերի և այլ իրավաբանական բնույթի փաստաթղթերի պատրաստումը: Այս հատվածը ներառում է նաև նոտարների, արբիտրաժային փորձունալի, դատական փորձագետների, սնանկության գործերով կառավարիչների ծառայությունները:

Այս հատվածը ներառում է հաշվապահական հաշվառումը, հաշվապահական և վերստուգիչ (աուդիտի անցկացում) ծառայությունները, ֆինանսական հաշվետվությունների և հաշիվների կազմումը, վճարովի խորհրդարավական ծառայությունները:

## 70

### **Գլխամասային գրասենյակների գործունեություն. կառավարման հարցերով խորհրդատվական ծառայություններ**

Հատվածը ներառում է առևտրային և այլ կազմակերպություններին խորհրդարավական և գործնական օգնության տրամադրումը կառավարման խնդիրների վերաբերյալ՝ ռազմավարական և կազմակերպական պլանավորում, ֆինանսական պլանավորում և բյուջեի կազմում, արտադրանքի պահանջարկի և իրացման խնդիրների ուսումնասիրում և զարգացումների կանխատեսում, մարդկային ռեսուրսների կառավարում, իրավիճակի վերլուծություն, պլանավորում, արտադրության պլանավորում, կառավարման արդյունավետություն: Այստեղ ներառվում է նաև գլխամասային գրասենյակների գործունեությունը՝ նույն կազմակերպության այլ միավորների գործունեության հսկումը և կառավարումը:



71

**Ճարտարապետական և ճարտարագիտական գործունեություն.  
տեխնիկական փորձարկումներ և վերլուծություններ**

72

**Գիտական հետազոտություններ և մշակումներ**

Հատվածը ներառում է երեք տեսակի գիտական հետազոտություններ՝

- հիմնարար հետազոտություններ՝ փորձարարական կամ տեսական աշխատանքներ, որոնք ի սկզբանե ուղղված են երևույթների և դիտման ենթակա ակներև փաստերի հիմքում ընկած հիմնարար օրենքների վերաբերյալ նոր գիտելիքների ձեռք բերմանը, ոչ դրանց անմիջական կիրառման կամ օգտագործման նպատակով

- կիրառական հետազոտություններ՝ ինքնօրինակ հետազոտություններ, որոնք ի սկզբանե ուղղված են նոր գիտելիքների ձեռք բերմանը, անմիջական գործնական նպատակի իրագործման կամ խնդիրների լուծման համար

- փորձարարական մշակումներ՝ հետազոտությունների արդյունքում կամ գործնական փորձից ստացված գիտելիքների հիման վրա համակարգված աշխատանքներ, որոնք ուղղված են նոր նյութերի, արտադրատեսակների, սարքավորանքի ստեղծմանը, նոր տեխնոլոգիական գործընթացների, համակարգերի, ծառայությունների ներդրմանը կամ արդեն մշակված ու ներդրված նմուշների կատարելագործմանը

Այս հատվածում ներառված գիտական հետազոտությունները և փորձարարական մշակումները բաժանվում են երկու ուղղությունների՝ բնական ու տեխնիկական գիտությունների և հասարակական ու հումանիտար գիտությունների:

Բացառվում է՝

- շուկայի իրավիճակի հետազոտությունները (տես 73.20):

**73**

**Գովազդային գործունեություն և շուկայի իրավիճակի հետազոտություն**

Հարվածը ներառում է գովազդային միջոցառումների կազմակերպումը՝ պարվիրատուի համար գովազդի ստեղծումը, պարբերական հրատարակություններում, թերթերում, ռադիոյում, հեռուստատեսությունում, այլ զանգվածային լրատվական միջոցներում, օրինակ՝ արտապարկերող էկրաններին կամ էլեկտրոնային կայքերում, գովազդի տեղադրումը:

**74 Մասնագիտական, գիտական և տեխնիկական այլ գործունեություն**

**75 Անասնաբուժական գործունեություն**

Հարվածը ներառում է գյուղատնտեսական և տնային կենդանիների (շների, կատուների և այլ) բուժման և առողջական վիճակի հսկման հետ կապված գործունեությունը: Այդ գործունեությունը իրականացվում է որակյալ անասնաբուժների կողմից՝ անասնաբուժարաններում, մասնավոր կոնսուլտացիաներում, վիրահատարաններում, ինչպես նաև այցելելով գյուղատնտեսական ֆերմաները, շնանոցները, կենդանիների համար ապաստանները և այլն:

**N**

**ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

**77 Վարձույթ և լիզինգ**

Հարվածը ներառում է գույքային, ոչ ֆինանսական և ոչ նյութական արժեքների, այդ թվում՝ ավտոմեքենաները, համակարգիչները, լայն սպառման ապրանքները, արդյունաբերական մեքենաները և սարքավորանքը, վարձույթը և լիզինգը պարվիրատուների կողմից, պարբերաբար իրականացվող որոշակի վճարումների դիմաց:

Այս հարվածը ներառում է՝

- փոխադրամիջոցների վարձույթ
- հանգստի և սպորտի, կենցաղային պարագաների վարձույթ
- հիմնականում առևտրային նպատակների համար օգտագործվող մեքենաների և սարքավորանքի, այդ թվում՝ այլ փրանսպորտային միջոցները, վարձույթ և լիզինգ
- մտավոր սեփականության և համանման ոչ նյութական արժեքների լիզինգ

Այս հատվածը ներառում է միայն գործառնական լիզինգը:

Բացառվում է՝

- ֆինանսական վարձակալությունը (լիզինգը), (տես 64.91)
- անշարժ գույքի հանձնումը վարձակալության (տես L բաժինը)
- սարքավորանքի վարձույթը անձնակազմով (դասակարգվում է տարբեր խմբավորումներում, սարքավորանքի տեսակին համապատասխան, օրինակ՝ շինարարությունում F բաժինը, փոխադրումներում H բաժինը):

## 78

### **Զբաղվածության հարցերին առնչվող գործունեություն**

Հատվածը ներառում է անձնակազմի ընտրության, թափուր պաշտոնների ցուցակների կազմման, թեկնածուների ընտրման և ըստ աշխատատեղերի բաշխման, աշխատանքի տեղավորման նպատակով հավակնորդների ընտրման և թեսթավորման, հիմնականում ժամանակավոր աշխատանքի կատարման համար կապալային հիմունքով կազմակերպություններին վարձու աշխատուժով ապահովման և համանման ծառայությունների մատուցման հետ կապված գործունեությունը:

Այստեղ ներառվում է նաև անձնակազմի վարձակալման (այդ թվում՝ դերասանների ընտրության) գործակալությունների գործունեությունը:

Բացառվում է՝

- անհատ դերասանների անունից գործող թատերական գործակալների և գործակալությունների գործունեությունը (տես 74.90):

79

**Չբոսաշրջային գործակալությունների, զբոսաշրջային օպերատորների գործունեություն, տեղերի ամրագրում և զբոսաշրջության ոլորտի այլ ծառայություններ**

Հարվածը ներառում է խորհրդարկությունները, զբոսաշրջային երթուղիների և ուղևորությունների պլանավորումը կամ ուղեգրերի վաճառքը նախօրոք մշակված երթուղիներով, ինչպես նաև ուղևորությունների կազմակերպիչների և զբոսավարների գործունեությունը:

Այս հարվածը ներառում է նաև հյուրանոցներում, տրանսպորտում տեղերի, մշակութային, սպորտային և այլ միջոցառումների համար տոմսերի ամրագրման ծառայությունները:

80

**Անվտանգության ապահովում և հետաքննությունների կատարում**

Հարվածը ներառում է անվտանգության ապահովման հետ կապված գործունեությունը՝ խուզարկուական ծառայությունները և հետաքննությունների կատարումը, պահակախմբերի և թիկնապահների գործունեությունը, փողի հավաքումը ու տեղափոխումը, այլ թանկարժեք արտադրատեսակների տեղափոխումը հատուկ ուսուցում անցած անձնակազմի միջոցով և սարքավորանքի կիրառմամբ՝ փոխադրման ընթացքում անվտանգությունն ապահովելու համար, էլեկտրոնային անվտանգության համակարգերի (այդ թվում՝ հակահրդեհային և տրանսպորտային ազդարարման) հսկումը և հեռակառավարումը, հաճախակի ներառելով նաև դրանց վաճառքը, տեղադրումը և նորոգման ծառայությունները: Եթե անվտանգության համակարգերի մշակումը, վաճառքը և նորոգումն իրականացվում են առանձին կազմակերպությունների կողմից, ապա դրանց գործունեությունը դասակարգվում է համապատասխանաբար մանրաձախ առևտրի, շինարարության և այլ դասերում:

## 81

### **Շենքերի սպասարկման և բնատեսարանի բարեկարգման գործունեություն**

Հատվածը ներառում է շենքերի ընդհանուր շահագործումն ապաստվող գործունեությունը, այդ թվում՝ համալիր սպասարկումը և պատշաճ վիճակում շենքի տարածքի պահպանումը, բոլոր տեսակի շենքերի ներքին տարածքների մաքրումը և հարդարումը, բոլոր տեսակի շենքերի արտաքին մաքրումը, ծխնելույզների, բուխարիների, վառարանների, օդափոխման հորանների, աղբայրոցների, ջրաջեռուցիչների (բոյլերների), արդյունաբերական սարքավորանքի մաքրումը, լողավազանների մաքրումը և սպասարկումը, գնացքների, ավտոբուսների, ինքնաթիռների և այլնի մաքրումը, ցիստերնների և լցանավերի մաքրումը, շենքերի, նավերի, գնացքների և այլ տարածքների ախտահանումը, միջատազերծումը, կրծողների ոչնցացումը, շների լվացումը, փողոցների ավլումը, ձյունից և սառույցից մաքրումը, բարեկարգումը և պատշաճ վիճակում տարածքի պահպանումը, համաձայն պլանի հետիոտնի ուղիների, սանդղափուլերի (տեռասների), հենապատերի, ավազանների և համանման կառույցների շինարարության հետ կապված ծառայությունների մատուցումը:

## 82

### **Ձեռնարկատիրական գործունեությանն օժանդակող վարչարարական և լրացուցիչ այլ գործունեություն**

Հատվածը ներառում է առևտրային կազմակերպությունների գործունեությանն օժանդակող գրասենյակային բոլոր անհրաժեշտ ծառայությունները, որոնք մատուցվում են այլ միավորի կողմից՝ վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով:

Այս հատվածը ներառում է այլ խմբավորումներում չներառված վարչարարական և այլ տեխնիկական ծառայությունները:

Բացառվում է՝

- նշված ծառայությունները մատուցող անձնակազմի ընտրության գործունեությունը (տես 78 հատվածը):

## Օ

### **ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ**

## 84

### **Պետական կառավարում և պաշտպանություն. պարտադիր սոցիալական ապահովություն**

Հատվածը ներառում է պետական կառավարման բնագավառում գործունեությունը: Ներառվում է պետական կենտրոնական, մարզային և համայնքային կառույցներում ներգրավված կազմակերպությունների գործունեությունը: Այն ներառում է ընդհանուր պետական կառավարման և սոցիալական ու փնտեսական քաղաքականության ոլորտների հսկումը, պաշտպանության, արդարադատության, ոստիկանության, հարկադրման, միջազգային հարաբերությունների ոլորտներում կառավարական ծրագրերի կառավարումը: Այսպես է ներառվում նաև պարտադիր սոցիալական ապահովագրության ոլորտում իրականացվող գործունեությունը:

Կազմակերպության ինստիտուցիոնալ կարգավիճակը որոշիչ գործոն է այս հատվածի համար և հասարակության համար կարևոր խնդիրների կազմակերպմանն առնչվող գործունեությունը կարող է դասակարգվել նաև այլ հատվածներում: Օրինակ՝ դպրոցական կրթության համակարգի կառավարումը (ուսումնական պլանների, մեթոդական դրույթների մշակումը, ստուգումների անցկացումը) դասակարգվում է 84 հատվածում, իսկ կրթական հաստատությունների գործունեությունը՝ P բաժնում, կամ քրեակարարական հաստատությունների հիվանդանոցների ու ռազմական հոսպիտալների գործունեությունը՝ Q բաժնում: Հակառակը՝ 84 հատվածում դասակարգվող գործունեության որոշ փեսակները կարող են իրականացվել ոչ պետական կազմակերպությունների կողմից:

## Բ

### ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Բաժինը ներառում է պետական և մասնավոր կրթությունը, ցանկացած մակարդակի և ցանկացած մասնագիտության առկա և հեռակա ուսուցումը, այդ թվում՝ ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինտերնետով կամ նամակագրությամբ: Այստեղ ներառվում է կանոնավոր կրթական համակարգի շրջանակում տարբեր մակարդակներում, տարբեր հաստատությունների կողմից իրականացվող կրթությունը, ինչպես նաև մեծահասակների համար կրթությունը, գրագիտության ծրագրերը և այլն: Ներառված են նաև ռազմական դպրոցները և ակադեմիաները, քրեակատարողական հիմնարկների դպրոցները և այլն: Կրթության յուրաքանչյուր մակարդակը ներառում է նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ֆիզիկական կամ մտավոր արատներով) աշակերտների ուսուցումը:

Կրթության մակարդակների և աստիճանների վերաբերյալ պարզաբանումները տրվում են համաձայն Կրթության միջազգային դասակարգման (ISCED 1997) սրանդարտի՝ 0 մակարդակը համապատասխանում է տվյալ բաժնի 85.10 դասին, առաջին մակարդակը՝ 85.20 դասին, երկրորդ և երրորդ մակարդակները՝ 85.3 խմբին, չորրորդ մակարդակը՝ 85.41 դասին, հինգերորդ և վեցերորդ մակարդակները՝ 85.42 դասին:

Այս բաժինը ներառում է նաև ուսուցման այլ տեսակները, օրինակ՝ ավտոտրանսպորտային միջոցների վարորդների նախապատրաստումը ավտոդպրոցներում, ինչպես նաև մեծահասակների համար կրթությունը, որոնք ըստ ծառայությունների բնույթի ներկայացվում են համապատասխան խմբավորումներում:

Տվյալ բաժնի ենթադասերի մակարդակով մանրամասնեցումը կատարվել է, հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքը:

## **85 Կրթություն**

### **Q**

## **ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՊԱՍԱՐԿՈՒՄ**

Բաժինը ներառում է առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման բնագավառում իրականացվող գործունեությունը: Այն ընդգրկում է բժշկական հաստատությունների, մասնագիտական բժշկական անձնակազմի կողմից մատուցվող ծառայությունների մի համալիր, ինչպես նաև սոցիալական՝ առողջապահական բնույթի, խնամքի ծառայությունները:

### **86**

## **Առողջապահություն**

Հարվածը ներառում է բուժական, վիրաբուժական, հոգեբուժական, թունաբանական հիվանդանոցների, առողջարանների, հիվանդությունների կանխարգելման ու վերականգնողական կենտրոնների և համապատասխան միջոցներով ապահովված այլ բժշկական հաստատությունների գործունեությունը, որն ուղղված է հիվանդությունների ախտորոշմանը, սրացիոնար պայմաններում հիվանդների բուժմանը, ինչպես նաև առողջական վիճակի կայունացման և այլ ծառայությունների մատուցմանը: Ներառվում են նաև առաջնային և մասնագիտացված բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող մասնագետների ծառայությունները, արտահիվանդանոցային և հիվանդանոցային բժշկական օգնությունը:

Այս հարվածը ներառում է ստոմատոլոգիական գործունեությունը՝ ատամնաբուժությունը և բերանի խոռոչի ախտաբանական, օրթոդոնտիկ բնույթի ընդհանուր և մասնագիտացված ծառայությունները:

Այս հարվածը ներառում է նաև բնակչության սոցիալական սպասարկումը՝ խնամքի կարիք ունեցող հիվանդներին բժշկական ծառայությունների մատուցումը, որն իրականացվում է արտահիվանդանոցային պայմաններում հիվանդների սպասարկման իրավունք ունեցող միջին բժշկական անձնակազմի կողմից:



**87**

**Բնակչության սոցիալական սպասարկում**

Հատվածը ներառում է սոցիալական սպասարկմամբ զբաղվող կազմակերպությունների գործունեությունը, որն ուղղված է հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց կացության կազմակերպմանը և միջին բժշկական անձնակազմի կողմից խնամքի ապահովմանը:

**88**

**Սոցիալական սպասարկում առանց կացության ապահովման**

Այս հատվածը ներառում է անմիջական օգնության կարիք ունեցող անձանց սոցիալական սպասարկումը: Այս հատվածի ծառայությունները չեն ներառում կացարանով ապահովումը, բացառությամբ ժամանակավոր հանգրվանումը:

**R**

**ՄՇԱԿՈՒՅԹ, ԶՎԱՐՃՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՆԳԻՍ**

Բաժինը ներառում է մշակույթի, զվարճությունների, հանգստի և սպորտի բնագավառում հասարակությանը մատուցվող ծառայությունները՝ մշակութային, հանդիսադիր միջոցառումների ներկայացման, թանգարանների, պատմական վայրերի այցելման, սպորտային մրցումների, մոլեխաղերի և հանգստի այլ միջոցառումների կազմակերպման:

**90**

**Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն**

Հատվածը ներառում է հանդիսադիր ներկայացումների, մշակութային միջոցառումների, այցելուների դիման համար ցուցահանդեսների կազմակերպումը, աջակցումը և մասնակցության ապահովումը, գեղարվեստական

ստեղծագործությունների, ներկայացումների ստեղծման համար դերասանական, գեղարվեստական և տեխնիկական անձնակազմի տրամադրումը:

Բացառվում է՝

- կինո և տեսաֆիլմերի արտադրությունը և տարածումը (տես 59.11, 59.12, 59.13),

- կինոնկարների ցուցադրումը (տես 59.14),

- ռադիոհեռարձակման և հեռուստատեսության բնագավառում գործունեությունը (տես 60.1, 60.2),

- թանգարանների, բուսաբանական և կենդանաբանական այգիների, պատմական վայրերի ու կառույցների, բնական արգելոցների պահպանման և շահագործման գործունեությունը (տես 91 հատվածը),

- մոլեխաղերի և գրագի կազմակերպման հետ կապված գործունեությունը (տես 92 հատվածը),

- սպորտային մրցումների, զվարճությունների և հանգստի կազմակերպման հետ կապված գործունեությունը (տես 93 հատվածը):

## 91

### **Գրադարանների, արխիվների, թանգարանների և այլ մշակութային կազմակերպությունների գործունեություն**

Հատվածը ներառում է գրադարանների, արխիվների, բոլոր տեսակի թանգարանների, կենդանաբանական և բուսաբանական այգիների, բնական արգելոցների գործունեությունը, պատմական վայրերի ու կառույցների շահագործումը: Այս հատվածը ներառում է նաև պատմական, մշակութային, կրթական նշանակության օբյեկտների, բնական հրաշալիքների և հիշարժան վայրերի պահպանման գործունեությունը, այդ թվում՝ վայրի բնության պահպանումը:

Բացառվում է՝

- սպորտային մրցումների անցկացման և զվարճությունների կազմակերպման համար օբյեկտների և հանգստավայրերի (լողափների, հանգստի այգիների) գործունեությունը (տես 93 հատվածը):

92

**Շահումով խաղերի կազմակերպման հետ կապված գործունեություն**

Հապվածը ներառում է շահումով խաղերի կազմակերպման գործունեությունը՝ կազինոների, խաղապոնների, բինգոյի սրահների ծառայությունները, դրամական շահումով ավտոմատների, տեսախաղային տերմինալների, լոտոտրոնների շահագործումը, վիճակախաղերի և խաղագումարով գրազի կազմակերպումը:

93

**Սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման բնագավառում գործունեություն**

Հապվածը ներառում է սպորտի, զվարճությունների և հանգստի կազմակերպման հետ կապված գործունեությունը (բացառությամբ թանգարանների, բուսաբանական և կենդանաբանական այգիների, պատմական վայրերի ու կառույցների և բնական արգելոցների պահպանման և շահագործման, ինչպես նաև մոլեխաղերի և գրազի կազմակերպման հետ կապված գործունեությունը):

Բացառվում է արվեստի բնագավառում՝ դրամատիկական, երաժշտական, թատերական ներկայացումների, համերգների, օպերայի, պարային արվեստի և այլ գործունեությունը (տես 90 հապվածը):

S

**ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բաժինը ներառում է անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեությունը, համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգումը և ուրիշ խմբավորումներում չներառված այլ անհատական ծառայությունների մատուցումը:

## 94

### **Անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեություն**

Հափվածը ներառում է որոշակի խմբերի շահերը ներկայացնող կամ հասարակության լայն շրջանում գաղափարներ տարածող կազմակերպությունների գործունեությունը: Այդ կազմակերպությունները սովորաբար կազմված են ընտրված անդամների խմբերից, սակայն նրանց գործունեությունը կարող է իրականացվել նաև ի նպաստ անդամ չհանդիսացող այլ խմբերի շահերին:

Տվյալ հատվածի բաժանումն ըստ խմբերի պայմանավորված է այն նպատակներով, որոնք դրված են կազմակերպությունների առջև՝ առևտրային, ձեռնարկատիրական և գիտական գործունեությամբ զբաղվող անձանց շահերը ներկայացնող և անդամության վրա հիմնված կազմակերպությունների գործունեություն (94.1), վարձու աշխատողների շահերը պաշտպանող արհեստակցական միությունների գործունեություն (94.2), այլ հասարակական կազմակերպությունների՝ քաղաքական, կրոնական, մշակութային կամ այլ գաղափարների տարածմանն ուղղված գործունեություն (94.3):

## 95

### **Համակարգիչների, անձնական օգտագործման և կենցաղային արտադրատեսակների նորոգում**

Հափվածը ներառում է համակարգիչների և ծայրամասային սարքվածքների՝ անհատական համակարգիչների, նոութբուքերի, համակարգչային տերմինալների (տեղեկատվության ներանցման և արտածման սարք), հիշող և տպիչ սարքերի նորոգումը և սպասարկումը: Այն ներառում է նաև հաղորդակցական սարքավորանքի, ֆաքսիմիլային ապարատների, ընդունահաղորդիչների, կենցաղային էլեկտրոնային սարքերի (ռադիո-, հեռուստա- և այլ ծայնա- և տեսասարքվածքների), տնային այգեգործական գույքի (սիզամարգահինձիչների, ձյունը և թափված տերևները ցրող օդափուքերի և այլ), կոշիկի և կաշվե արտադրատեսակների, հագուստի և հագուստի պարագաների, կահույքի և տան կահավորանքի, սպորտային

պարագաների, երաժշտական գործիքների, այլ անձնական և կենցաղային առարկաների նորոգումը:

**96**

**Այլ անհատական ծառայությունների մատուցում**

Հափվածը ներառում է դասակարգման այլ խմբավորումներում չներառված սպասարկման տարբեր ծառայությունները՝ բոլոր տեսակի հագուստի, մանածագործական և մորթե արտադրատեսակների լվացում, մաքրում և չոր մաքրում, մազերի լվացում, հարդարում, գեղեցկության սրահների, թաղումների կազմակերպման հետ կապված և այլ ծառայություններ:

**T**

**ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ  
ՈՐՊԵՍ ԳՈՐԾԱՏՈՒ. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
ՉՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՍԵՓԱԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ**

**97**

**Տնային տնտեսությունների գործունեություն որպես  
գործատու սպասարկող անձնակազմի համար**

**98**

**Մասնավոր տնային տնտեսություններում ապրանքների և  
ծառայությունների արտադրություն (առանց տարբերակման)  
սեփական սպառման համար**

**U**

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ**

Որոշելով տնտեսավարող միավորի կողմից իրականացվող գործունեության պատկանելիությունը որոշակի բաժնին և հափվածին, նույն կարգով կատարվում է տնտեսական գործունեության դասակարգումը խմբի

և դասի մակարդակով: Պետք է հաշվի առնել, որ տնտեսական միավորի գործունեության տեսակը ծածկագրվում է քառանիշ կոդով:

Դժվար կողմնորոշվելու դեպքում, գործունեության տեսակի կոդավորման գործընթացը կարելի կազմակերպել, կիրառելով «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչ» էլեկտրոնային տարբերակի որոնման գործառույթը: Բացելով դասակարգչի «Պարզաբանումներ» երկրորդ մասը, «Edit» ընտրացանկից «Find» հրամանով բացվում է որոնման պատուհանը, որտեղ լրացվում է գործունեությունը բնութագրող բառը: Ուշադիր կարդալով պարզաբանող տեքստերը, որտեղ հանդիպում է այդ բառը, ընտրվում է տնտեսավարող միավորի գործունեությանը համապատասխանող դասը: Դասակարգչի թղթային տարբերակում գործունեության անվանման որոնումը որոշ չափով հեշտացնելու համար օգտագործվում է տնտեսական գործունեության անվանումների այբբենական առարկայացանկը (Մաս 3):

### **3. Սահմանումներ**

1. Արտադրական գործընթաց՝ վերամշակման (ֆիզիկական, քիմիական և այլն) գործընթաց, որը նախատեսված է նոր արտադրանքի (սպառողական կամ արտադրական նշանակության ապրանքներ, կիսապատրաստվածքներ) արտադրության, օգտագործված ապրանքների վերամշակման կամ արդյունաբերական ծառայությունների մատուցման համար:

2. Արտադրական միջոցներ՝ միջոցներ (բացի նյութական միջոցներից և վառելիքից), որոնք շահագործվում են ապրանքների և/ կամ ծառայությունների արտադրության ընթացքում: Արտադրական միջոցներն են՝ արտադրական տարածքները, մեքենաները, բեռնատարները, տրակտորները: Հողը և ոչ նյութական ակտիվները (մտավոր սեփականության օբյեկտների, համակարգչային ծրագրերի, տվյալների հիմնապահեստների օգտագործման վերաբերյալ բացառիկ իրավունքը) արտադրական միջոցներ չեն համարվում:

3. Արտադրական սարքավորանք՝ հիմնականում արտադրական տարածքներում արդյունաբերական գործընթացների ընթացքում օգտագործման համար նախատեսված մեքենաներ և սարքավորանք, օրինակ՝

մեքանիզմներ և այլ հաստատություններ, լվացքատնային օգտագործվող լվացքի մեքենաներ, ստուգիչ-չափիչ սարքեր, ամբարձիչ-փոխադրական սարքավորանք և այլն:

4. Արտադրանք՝ տնտեսական գործունեության արդյունք: Ընդհանուր տերմին է, որն օգտագործվում է և ապրանքի, և ծառայության սահմանման համար:

5. Արտադրություն՝ արտադրանք ստանալու համար կազմակերպված գործունեություն: Ընդհանուր տերմին է, որն օգտագործվում է ինչպես գյուղատնտեսությունում, արդյունահանող և մշակող արդյունաբերությունում, այնպես և ծառայությունների մատուցման ոլորտում: Արտադրության ծավալը ներկայացվում է բնահրային կամ արժեքային արտահայտությամբ:

6. Պատրաստի արտադրանք՝ արտադրանք, որի մշակման գործընթացն ավարտված է և այն պատրաստ է իրացման համար:

7. Կիսապատրաստվածք՝ արտադրանք, որն արդեն ենթարկվել է որոշակի մշակման, սակայն օգտագործելու համար դեռևս կարիք ունի լրացուցիչ վերամշակման: Այն կարող է վաճառվել այլ արտադրողին հետագա վերամշակման համար, օրինակ՝ ձուլածո նախապատրաստվածքներ, որոնք գնվում և վերջնամշակվում են այլ արտադրողի կողմից:

8. Մշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որի ընթացքում նոր արտադրանք ստանալու նպատակով փոխվում է հումքի, կիսապատրաստվածքի կամ պատրաստի արտադրանքի ձևը, հատկությունը և բաղադրությունը:

9. Վերջնամշակում՝ տեխնոլոգիական գործընթաց, որն իրականացվում է արտադրանքին որոշ հատկություններ հաղորդելու, արտադրանքի պահման կամ վնասակար ազդեցություններից պահպանելու համար:

10. Ապրանք՝ առուվաճառքի (փոխանակման) առարկա հանդիսացող արտադրանք: Դա կարող է լինել սերիական արտադրության արտադրանք, եզակի ստեղծագործություն կամ ծառայություններ մատուցելու համար նյութական միջոցներ, օրինակ՝ ծրագրային ապահովման կրիչներ:

11. Առևտուր՝ ձեռանարկափիրական գործունեություն կապված ապրանքների առուվաճառքի հետ՝ ապրանքների գնում վերավաճառքի

նպատակով (առանց վերամշակման), և (կամ) միջնորդական գործունեություն ապրանք մատակարարողի և գնորդի միջև:

12. Մեծածախ առևտուր՝ սեփական անունից ապրանքների վաճառքը մանրածախ վաճառողներին, արդյունաբերական, առևտրային և այլ սպառողներին, անկախ այն հանգամանքից, թե ապրանքն արտադրվել է փվյալ երկրում, ներմուծվել է կամ նախատեսված է արտահանելու համար:

13. Առևտուր գործակալների միջոցով (կոմիսիոն առևտուր)՝ մեծածախ առևտուր, երբ երրորդ կողմի անունից կատարվում է գործարք առևտրական գործակալների, մակլերների կամ առևտրական միությունների միջոցով:

14. Մանրածախ առևտուր՝ ապրանքների վաճառք վերջնական սպառողին, հիմնականում տնային տնտեսություններին: Մանրածախ առևտուրն իրականացվում է առևտրի համար նախատեսված փարածքներում, շարժական տրանսպորտային միջոցներից, պահեստներից, ժամանակավոր հատկացված տեղերից, ինչպես նաև ապրանքների վաճառք փոստով կամ հեռախոսով:

15. Ծառայություն՝ մատակարարի և հաճախորդի համագործակցությամբ հաճախորդի պահանջարկների բավարարմանն ուղղված մատակարարի գործունեության արդյունք: Ծառայությունը չունի նյութական ձև (բացառությամբ տեղեկատվական ոլորտը, որտեղ տեղեկատվությունը պահվում է կրիչների վրա), չի պահպանվում և չի փոխադրվում, ծառայության սպառումը համընկնում է դրա մատուցման հետ:

16. Սպառող՝ ստանում է, պատվիրում է կամ մտադրություն ունի ստանալու, պատվիրելու ապրանքներ կամ ծառայություններ սեփական կարիքների համար:

17. Նորոգում՝ ապրանքի ձևի, հատկությունների վերականգնմանն ու սպառողի պահանջներին համապատասխանեցմանն ուղղված գործունեություն:

18. Քաղաքաշինություն՝ կենսագործունեության համար բարենպաստ փարածական միջավայրի ստեղծման կամ փոփոխման նպատակով պետության, ֆիզիկական, իրավաբանական անձանց և դրանց միավորումների գործողությունների համախումբ:



19. Հեռահաղորդակցական ցանց՝ տեխնիկական միջոցների համակարգ, որով իրականացվում է հեռահաղորդակցությունը:

20. Տեղեկատվական տեխնոլոգիաներ՝ համակարգչային տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովման վրա հիմնված տեղեկատվական համակարգ, որի միջոցով իրականացվում է տեղեկատվության փոխակերպում, մշակում, պահում, փոխանցում, որոնում, պաշտպանություն անթույլատրելի մուտքերից:

21. Ապահովագրություն՝ գործունեություն, ըստ որի ապահովագրողներն ստանձնում են պարտավորություն հատուցել ապահովագրության պայմանագրով նախատեսված ապահովագրական պատահարների հետևանքով ապահովադիրների կրած փաստացի վնասը կամ կորուստները:

22. Տրանսպորտային գործունեություն՝ փոխադրումներ իրականացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցների և հաղորդակցության ուղիների շահագործման, փոխադրման ծառայությունների մատուցման հետ կապված գործունեություն:

25. Հաշվապահական հաշվառում՝ տնտեսական գործառնությունների համընդհանուր և անընդհատ փաստաթղթային հաշվառման միջոցով կազմակերպության ակտիվների, կապիտալի, պարտավորությունների վիճակի ու շարժի վերաբերյալ դրամական արտահայտությամբ, տեղեկատվության հավաքման, գրանցման և ընդհանրացման համակարգ:

26. Տնային տնտեսություն՝ անձանց ոչ մեծ խումբ, որոնք բնակվում են միևնույն կացարանում, միավորում են իրենց ունեցվածքն ու եկամուտը կամ դրանց մի մասը և միասին սպառում են ապրանքների և ծառայությունների որոշ տեսակներ, հիմնականում՝ կացարանը և սննդամթերքը:

27. Հավելում՝ որպես սննդամթերք չօգտագործվող և սննդամթերքի բաղադրամաս չհանդիսացող որևէ նյութ, որն անկախ դրա սննդարարության արժեքից, ավելացվում է սննդամթերքին տեխնոլոգիական նպատակներով:

28. Փաթեթվածք՝ տարբեր միջոցներով արտադրանքի փաթեթավորում, որն արտադրանքի շրջանառության ընթացքում ապահովում է ապրանքի պահպանումը վնասվածքներից և կորուստներից, շրջակա միջավայրն աղտոտումից:

29. Փաթեթավորում՝ փոխադրման, պահման, իրացման և սպառման համար արտադրանքի նախապատրաստում փաթեթվածքի տեսքով:

30. Կենցաղային տեխնիկա՝ հիմնականում տնային տնտեսություններում օգտագործելու համար նախատեսված մեքենաներ և սարքավորանք, օրինակ՝ լվացքի մեքենա, սառնարան, հեռուստացույց և այլն:

31. Տեխնիկական սպասարկում՝ շահագործման փուլ, որը ներառում է շահագործվող կամ պահպանվող սարքավորանքի, ցանցերի, համակարգերի հուսալի աշխատանքի ապահովմանն ուղղված կազմակերպական և տեխնիկական միջոցառումներ:

32. Պատվիրատու՝ տնտեսական միավոր, որը վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով պատվիրում է այլ տնտեսական միավորին իրականացնել արտադրական գործընթացի որոշակի գործառույթներ կամ ամբողջ գործընթացը:

33. Կապալառու՝ տնտեսական միավոր, որը վարձատրությամբ կամ պայմանագրային հիմունքով կատարում է այլ տնտեսական միավորի կողմից պատվիրված տեխնոլոգիական գործընթացի որոշակի գործառույթներ:

34. Ենթակապալի պայմանագիր՝ պայմանագիր, համաձայն որի պատվիրատուն իրավունք ունի պահանջել կապալառուից արտադրական որոշակի գործընթացների կատարում:

35. Ենթակապալի պայմանագրով իրականացվող գործունեության դասակարգման կանոնները՝ տնտեսական միավորները, որոնց գործունեությունն իրականացվում է ենթակապալի պայմանագրով, սովորաբար դասակարգվում են նույն այն դասերում, որտեղ դասակարգվում են սեփական միջոցներով համանման ապրանքներ արտադրող և ծառայություններ մատուցող միավորները, բացառությամբ առևտրի և շինարարության հատվածները (օրինակ՝ շինարարությունում հիմնական պատվիրատուն դասակարգվում է 41.10 «Կառուցապարման նախապատրաստական աշխատանքներ» դասում, իսկ ենթակապալառուն՝ 41.20 «Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն» դասում): Հիմնական պատվիրատուն ենթակապալառուին ապահովում է անհրաժեշտ տեխնիկական պայմաններով, անվանացանկերով: Հիմնական պատվիրատուն ենթակապալառուին

տրամադրում է նաև (կամ չի տրամադրում) հումք կամ միջանկյալ մթերք: Օրինակ՝ ենթակապալառուն կարող է իրականացնել պայմանագրով նախատեսված փարբեր գործունեություն՝ մեքաղների մշակում (քրոմապատում), գործվածքի ներկում, հագուստի վերջնամշակում և այլն:

Հիմնական պատվիրատուի գործունեությունը չի դասակարգվում մշակող արդյունաբերության խմբավորումներում, եթե նա հանդիսանում է հումքի սեփականատերը, իսկ արտադրության ամբողջ գործընթացը իրականացնում է ենթակապալառուն: Եթե հիմնական պատվիրատուն կնքում է ենթակապալի պայմանագիր արտադրության մի մասի վերաբերյալ, ապա իր գործունեությունը դասակարգվում է մշակող արդյունաբերության խմբավորումներում:

Եթե ենթակապալի պայմանագիրը կապված է զբաղվածության հետ, անհրաժեշտ է հաշվի առնել պայմանագրի տևողությունը և պատվիրատուների թվաքանակը՝

- եթե պայմանագիրը կարճաժամկետ է և կնքված է մեկ հիմնական պատվիրատուի հետ, ապա ենթակապալառուն և հիմնական պատվիրատուն դասակարգվում են նույն դասում, ըստ հիմնական գործունեության տեսակի,

- եթե պայմանագիրը կարճաժամկետ է և կնքված է մի քանի պատվիրատուների հետ, ապա հիմնական պատվիրատուն դասակարգվում է ըստ հիմնական գործունեության տեսակի, իսկ ենթակապալառուն՝ 78.20 դասում «Ժամանակավոր աշխատուժով ապահովման գործունեություն»,

- եթե պայմանագիրը երկարաժամկետ է և կնքված է մեկ հիմնական պատվիրատուի հետ, ապա ենթակապալառուն և հիմնական պատվիրատուն դասակարգվում են նույն դասում, ըստ հիմնական գործունեության տեսակի,

- եթե պայմանագիրը երկարաժամկետ է և կնքված է մի քանի պատվիրատուների հետ, ապա հիմնական պատվիրատուն դասակարգվում է ըստ հիմնական գործունեության տեսակի, իսկ ենթակապալառուն՝ 78.30 դասում «Աշխատուժով ապահովման այլ գործունեություն»:

## **4. Տնտեսական գործունեության դասակարգման օրինակներ**

### **4.1 Իրացում և առևտուր**

Յուրաքնչյուր տնտեսավարող միավոր արտադրանքը արտադրում է վաճառելու համար: Սակայն դասակարգելիս, հաճախ շփոթում են «իրացում» և «առևտուր» հասկացությունները: Արտադրողը իրացնում է իր ապրանքը այլ արտադրողին (հետագա մշակման համար), միջնորդին (վերավաճառքի համար) կամ սպառողին, իսկ առևտուր իրականացնող տնտեսական միավորը գնում է ապրանքն արտադրողից վերավաճառքի նպատակով (առանց վերամշակման): Օրինակ՝ եթե հացաթխման արտադրամասը իրացնելով թխված հացը առևտրով զբաղվող կազմակերպություններին նաև տեղում իրականացնում է հացի մանրածախ վաճառք, ապա նրա գործունեությունը դասակարգվում է միայն որպես «Հացի արտադրություն»: Սակայն, եթե հացաթխման արտադրամասն իր արտադրանքը իրացնում է իրեն պատկանող և արտադրամասի տարածքից դուրս գտնվող խանութների միջոցով, ապա հացաթխման արտադրամասն իրականացնում է նաև երկրորդային գործունեություն, որը դասվում է առևտրի ոլորտին:

### **4.2 Թոշնաբուծական տնտեսությունների գործունեություն**

Թոշնաբուծական տնտեսությունների գործունեությունը ներառում է գյուղատնտեսական թռչունների ինկուբացիա, աճեցում, թռչնի մսի արտադրություն և իրացում: Այդ տնտեսությունների հիմնական գործունեությունը դասակարգվում է «Ընտանի թռչունների բուծում» 01.47 դասում, քանի որ հիմնական ծախսերը տնտեսությունը կատարում է այդ փուլում, թեև հիմնական շահույթը ստացվում է թռչնի մսի արտադրությունից և իրացումից (10.12 դաս), որը տվյալ դեպքում համարվում է երկրորդային գործունեություն և դասվում է արդյունաբերական ոլորտին:

### **4.3 Ավտոմեքենաների վաճառք**

Ավտոմեքենաների վաճառքն առանձնացվում է այլ ապրանքների մեծածախ ու մանրածախ առևտրից և դասակարգվում է 45 հատվածում: Ի դեպ, այս հատվածում դասակարգվում են նաև ավտոմեքենաների պահեստամասերի և պարագաների մանրածախ առևտուրը (45.32), ավտոմեքենաների տեխնիկական սպասարկումը և նորոգումը (45.20),

ավորմենթենաների վերասարքավորումը սեղմված և հեղուկացված գազով աշխատելու համար (45.20):

Ավրոտրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի պարբերական զննումը դասակարգվում է ոչ թե 45 հատվածում, այլ 71.20 դասում:

#### 4.4 Ավիատրոմսերի վաճառք

Ավիատրոմսերի (զննաքննիչի, միջքաղաքային ավտոբուսների տրոմսերի) վաճառքը չի դասվում մանրածախ առևտրի ոլորտին: Եթե ավիատրոմսերի վաճառքը կատարվում է զբոսաշրջային կազմակերպությունների կողմից, ապա որպես միջնորդական ծառայություն, այդ գործունեությունը դասակարգվում է 79 հատվածի համապատասխան դասերում: Եթե ավիատրոմսերի վաճառքը կատարվում է ավիափոխադրողի գործակալությունում, այն, որպես օժանդակ տրանսպորտային գործունեություն, դասակարգվում է 52.2 խմբի համապատասխան դասերում:

4.5 Շարժիչային վառելիքի վաճառք, կենցաղային վառելիքի վաճառք, բնական գազի մատակարարում խողովակաշարերով:

Շարժիչային վառելիքի (բենզինի, հեղուկացված գազի և այլն) և կենցաղային հեղուկ վառելիքի, բալոններով գազի վաճառքը դասվում են մանրածախ առևտրի ոլորտին և դասակարգվում են 47.3 խմբի համապատասխան դասերում ու 47.78 դասում: Սակայն բնական գազի մատակարարումը խողովակաշարերով, երբ սպառողը ստանում է գազը խողովակով, անմիջական սպառման կետում, դասակարգվում է 35.23 դասում:

#### 4.6 Բեռնափոխադրումներ և սուրհանդակային ծառայություն

Բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպությունները փոխադրում են բեռները (ամբողջ ծավալով) մեկ վայրից մեկ այլ վայր: Եթե բեռնափոխադրումը կատարվում է արտերկրից, բեռների մաքսազերծումն իրականացնում է բեռի սեփականատերը: Բեռնափոխադրող կազմակերպությունները դասակարգվում են 49 հատվածի համապատասխան դասերում, կախված տրանսպորտային փոխադրամիջոցից:

Սուրհանդակային ծառայություն իրականացնող կազմակերպությունները փոխադրում են փոստային առաքանին (ներքին և միջազգային),

«դռնից դուռ» սկզբունքով՝ առաքանին տեսակավորում են ըստ հասցեատերերի, տեղ հասցնում և հանձնում հասցեատերին: Եթե առաքանին փոխադրվում է արտերկրից, բեռների մաքսազերծումն իրականացնում է սուրհանդակային ծառայություն իրականացնող կազմակերպությունը: Այդ կազմակերպությունները դասակարգվում են 53.20 դասում:

#### 4.7 Հանրային սննդի կազմակերպում

Հանրային սննդի կազմակերպումը (56 հատվածը) ներառում է հաճախորդին պատրաստի սննդով ապահովումը՝ տեղում սպառելու համար: Այս հատվածում ներառվում են ռեստորանների, սրճարանների, բարերի, ճաշարանների և հանրային սննդի ոլորտում գործող այլ կազմակերպությունների ծառայությունները: Դասակարգելիս այդ կազմակերպությունների գործունեությունն, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մատուցվող ծառայությունների բնույթին:

Օրինակ՝ եթե կազմակերպությունն իրեն անվանվում է «բար», բայց այնտեղ մատուցվում է տեղում պատրաստված կերակուր, այդ կազմակերպության գործունեությունը դասակարգվում է 56.10 դասում՝ ռեստորանների ծառայություններ: Ճաշարաններ համարվում են միայն այն կազմակերպությունները, որոնց գործունեությունն իրականացվում է հավատարմագրային պայմանագրի հիման վրա, իսկ հաճախորդների սպասարկումն իրականացվում է արտոնյալ գներով (56.29 դաս): «Գրիլ-հավ», «Ղարսի խորոված» և համանման այլ կերակրատեսակների, կարկանդակների տեղում պատրաստման և իրացման ծառայությունները դասվում են 56.10 դասին («Արագ սննդի» կետերի ծառայություններ):

Մեկ այլ օրինակ կարող է հանդիսանալ ինտերնետ-սրճարանների գործունեությունը: 56.1 խմբի համապատասխան դասերում դասակարգվում են այն կազմակերպությունները, որոնց հիմնական ծառայությունները կարելի է դասել հանրային սննդի կազմակերպման ոլորտին, իսկ որպես լրացուցիչ անվճար ծառայություն՝ համացանցի հասանելիության ապահովումը: Սակայն, երբ ինտերնետ-սրճարանների հիմնական ծառայություններն են՝ համակարգչային խաղերի կազմակերպումը կամ տարբեր նպատակների համար համացանցի հասանելիության ապահովումը, ապա

այդ կազմակերպությունների գործունեությունը դասակարգվում է 61 հատվածում:

#### 4.8 Հրատարակչական գործ, տպագրական գործ

Հրատարակչական գործունեությունը դասվում է ծառայությունների ոլորտին (58 հատվածը), տպագրական գործը՝ արդյունաբերական ոլորտին (18 հատվածը):

Հրատարակչական գործունեություն իրականացնող կազմակերպությունները զբաղվում են տեղեկատվական արտադրանքի բնօրինակի ստեղծմամբ, ինչպես նաև տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերաբերյալ հեղինակային իրավունքի ձեռք բերմամբ:

Տպագրական գործունեություն իրականացնող կազմակերպությունները զբաղվում են բնօրինակից տեղեկատվական արտադրանքի բովանդակության վերարտադրմամբ, կիրառելով տարբեր մեթոդներ:

#### 4.9 Հեռուստատեսային ծրագրերի արտադրություն, կազմում, հեռարձակում

Հեռուստատեսային ծրագրերի արտադրությունը և կազմում ու հեռարձակումը դասակարգվում են տարբեր հատվածներում:

Հեռուստատեսային ծրագրերի արտադրությունը, որը ներառում է տարբեր ծրագրերի, սերիալների, գովազդային հոլովակների ստեղծումը, դասակարգվում է 59.11 դասում:

Հեռուստատեսային ծրագրերի կազմումը ներառում է արդեն ստեղծված տեսանյութերից ամբողջական ծրագրի բնօրինակի կազմումը, ներառյալ ուղիղ եթերով փոխառվող հարցազրույցներն ու հաղորդումները, նորությունները և այլն (60.20 դաս): Ավարտուն հեռուստաօրագրերը կարող են հեռարձակվել դրանք կազմող տնտեսավարող միավորի կողմից կամ փոխանցվել երրորդ կողմին՝ մալուխային կամ արբանյակային ցանցերով տարածման համար:

#### 4.10 Հեռահաղորդակցություն

Հեռահաղորդակցական կապի ապահովման գործունեություն իրականացնող կազմակերպությունները ըստ մատուցվող ծառայությունների

դասակարգելու համար հաշվի են առնվում օգտագործվող ենթակառուցվածքների տեսակը: Ձայնի, տվյալների, տեքստերի, ձայնագրությունների, պատկերների փոխանցումը կատարվում է լարային (61.1 խումբ), անլար (61.2 խումբ), արբանյակային (61.3 խումբ) հեռահաղորդակցական համակարգերի միջոցով: Ըստ այդ հատկանիշների տարանջատվում են նաև ինտերնետ հասանելիության տրամադրման ծառայությունները, դասակարգելով դրանք համապատասխանաբար 61.10, 61.20 և 61.30 դասերում:



## **Հարգելի հարկ վճարող,**

Ըստ տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի տեղեկություններն անհրաժեշտ է ներկայացնել ղեկավարվելով ՀՀ էկոնոմիկայի նախարարի 03.06.2009թ. №372-Ն հրամանով հաստատված տնտեսական գործունեության տեսակների ՀՀ դասակարգչով, որը հրապարակվել է 16.07.2009թ. ՀՀ Գերատեսչական նորմատիվ ակտերի N22 տեղեկագրում և տեղադրվել է **taxservice.am** («Հարկային բարեփոխումներ» բաժին), **mineconomy.am**, **smednc.am**, **armstat.am** կայքէջերում:

Ավելի մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք

- զանգահարել **060-544444** հեռախոսահամարով՝ Հարկ վճարողների հեռախոսազանգերի կենտրոն, ինչպես նաև այցելել Ձեր հաշվառման հարկային տեսչության սպասարկման ստորաբաժանում կամ հեղուկալ հասցեներում գործող մասնագիտացված հարկ վճարողների սպասարկման կենտրոններ:

**ք.Երևան, Կոմիտասի 35,**

**ք.Վանաձոր, Տիգրան Մեծի 35.**

- այցելել կամ զանգահարել «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի երևանյան գրասենյակ կամ մարզային մասնաճյուղեր, որոնք գործում են հեղուկալ հասցեներում:

**ք. Երևան, Միեր Սկրպյան 5ա, հեռ. (010) 54-16-48, 56-37-14, 58-32-61**

**ք. Գյումրի, Գարեգին Նժդեհի 1/5, հեռ. (0312) 3-20-35**

**ք. Իջևան, Աշոտ Մելիքբեկյան 5/7, հեռ. (0263) 3-44-58**

**ք. Սիսիան, Գարեգին Նժդեհի 2, հեռ. (0283) 0-63-39**

**ք. Կապան, Չարենց 2, հեռ. (0285) 2-45-41**

**ք. Սրբեփանավան, Գարեգին Նժդեհի 3/7, հեռ. (0256) 2-39-11**

**ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 20, հեռ. (0322) 2-13-70**

**ք. Չարենցավան, 6-րդ թաղամաս, Խանջյան 1, հեռ. (0226) 4-29-26**

**ք. Ապարան, Բաղրամյան 24, հեռ. (0252) 2-51-94**

**ք. Սևան, Նաիրյան 155ա, հեռ. (0261) 2-49-04**

**ք. Արմավիր, Երևանյան 18/1, հեռ. (0237) 2-08-46**

**ք. Վայք, Ջերմուկ խճուղի 14/45, հեռ. (0282) 2-17-70**

**ք. Արտաշատ, Օգոստոսի 23/136ա, հեռ. (0235) 2-39-22**

- զանգահարել **010-580373** հեռախոսահամարով՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժին:



**ԱՍՈՂԻԿ**

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ք. Երևան Սայաթ-Նովա 24 , (գրասենյակ)  
Ավան, Գավիթ Մայան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)